

д. Дуло  
Земельный Упр  
1914 г.

291. 99

В- 30



891.99 6688-57

230

Dear friends of mine

|     |      |          |
|-----|------|----------|
| VAC | 4683 | 29/11/89 |
|-----|------|----------|

10965

19 NOV 2017

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ

ᐃ ᐱ ᐅ ᑦ ᐱ ᑲ ᑲ ᐸ ᑲ ᐱ

ՏՐԱՄԱ ՆԻՆԳ ԱՐԱՐՈՎ



спр. ~~ср.~~ (Врху)

1914

891-99

2 - 30

ԼՍԻՈՆ ԵԱՆԹ

891.99

Շ-30

# ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ

ՏՐԱՄԱ ՀԻՆԳ ԱՐԱՐՈՎ



10965

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
"ԱՐԱՔՍ", ՏԳԱՐԱՆԻ

1914  
Կ. ՊՈԼԻՍ

13 JUL 2013

4029



6678-57

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

## ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ

Ծովեզերեա ամարանոցի մը պարտեզը:

Զախ կողմը քարէ լայն սանդուղներ կը տանին դէպի բնակարանի պատշգամբ. աջ կողմը ամբողջովին բաղեղներով ծածկւած ցածիկ պատ մը ու վանդակէ փոքրիկ դռնակ: Հեռուն, ծառերուն մէջէն, կ'երեւա ծովի ցոլուն հայելին: Դէպի առաջ ահագին ծառի մը բունին տակ ոգորէ քերել նստարան մը, մարմար սեղան ու պարտեզի աթոռներ. ամբողջ յատակը փափուկ դեղին աւազ:

Պայծառ առտու է:

### 1.

**Մարգար** — (Քիչ մը կռպտ, քիչ մը միամիտ բարի մարդ մը: Կեցած է անշարժ, աչքերը յառած գետին ու կը լսէ: Դռնուն ֆէս. անթեւ բաճկոնին վրայէն ամբողջ մարմինը ծածկող սպիտակ գոգնոցը հաւքած, փաթթած է մէջքը. ձեռքը տուփ մը):

**Վահրամ** — (Երեսունի մօտիկ վաղեւակազմ երիտասարդ մը հատու շարժումներով ու չարացած շեշտ մը խօսածքի մէջ, կը պատմէ հանգիստ). . . Իսկ իրենք սուսիկ-փուսիկ կը քաշւին անտառը ու մութը կոխելուն պէս ձորին մէջէն ճամբանին կը շարունակեն: Հիմա պահականոցին մէջը չէնք-չնորհք սարսափ է ինկեր. կ'ըսեն՝ դէեր են, անոնց հետ գլուխ ելնել չըլլար: (Քսեմիծաղ): Դեն՛ր, ի հա՛րկէ, արեւստն ու քաջութիւնը արդէն

դե են եղեր մի՛շտ: Իսկ թէ անոնց հետ գլուխ ել-  
նել չըլլար, հա՛, ատոր կը հաւտամ. գաղափարով  
մը ոգեւորւած ու կեանքէն ձեռք վեր առած մարդ-  
կանց հետ գլուխ ելնել չըլլար:

**Մարգար** — Ի՞նչ ըսեմ, տղա՛. Աստուած յաջողէ՛. միայն  
զգուշ եղէ՛ք, զգո՛ւշ. կրակի հետ չին խաղար:

**Վահրամ** — Խաղալու ժամանակը անցեր է: Է՛, ինչ և  
է, թողնենք: (Շուրջն ու պատշգամը դետելով): Իսկ  
հո՞ս ինչ կա չը կա: Տո՞ւնն են:

**Մարգար** — (Անտարքեր ուսը ցնցելով): Է՛:

**Վահրամ** — Օրիո՞րդն ինչ բանի է:

**Մարգար** — Ի՞նչ օրիորդ:

**Վահրամ** — Նա՛, ձե՛րը: Քանի՞ օրիորդ կա հոս:

**Մարգար** — Մարի՛ն: (Հեղձոտ): Հարո՛ւստ, սիրո՛ւն,  
ազա՛տ, ո՛չ ցաւ ունի, ո՛չ սրկաս. անոր տէրտը  
քեզի՞ են տւեր:

**Վահրամ** — (Մտաոյդ): Շխտակ է: (Ձղային շարժումով մը  
ծառէն տերև մը փրցնելով): Իսկ անդին հաղարներ  
կան, որոնք ցաւ ալ ունին, պակաս ալ, ու բեռ-  
ներո՛վ:

**Մարգար** — Ըսե՛նք, չիտակը խօսելով, ասոնց մէջ (ար-  
համարհանքով տունը մտնանք): Նորէն ամենէն աղէկը  
անիկա է. քիչ մը յամառ, քիչ մը երես առած,  
բայց բարի սիրտ ունի: Անցած օր երկար-բարակ  
ինծի խօսեցուց. հարցուց մեր տան մասին, երկրի  
մասին, քու մասին.

**Վահրամ** — (Խայթւած): Ի՞մ մասին: (Ծաղրաւորով) Եւ ի՞նչ:

**Մարգար** — Ես ի՞նչ գիտեմ, ծնո՛ղքդ, տղայութի՛ւնդ:  
Չէ՛, ես մարդը մէկ նայւածքով կը ճանչնամ. առ-  
ջի օրը որ աս տունը ոտք դրի՛ «աս աղջկի՛ր բարի  
աղջիկ է» ըսի, և նայէ՛, խօսքս ելաւ:

**Հարենց** — (Քառասունի հակող լայն ու բարձրահասակ մարդ մը,  
կտր մօրուքով, ակունջները ֆէսին տակ, կ'երևա սանդուղ-  
ներուն վերէն, ձեռքերը տափատին դրպանը): Դէ՛ եկուր  
դուն Արթին եղի՛ր ու մի՛ բարկանար: Պէ՛ մարդ,  
ես ներսը նստեր եմ կ'ըսպասեմ ու կ'ըսպասեմ քե-  
զի, դուն հոս ուրիշներուն հետ անուշիկ-անուշիկ  
խօսքի ես բռնւեր:

**Մարգար** — (Դէմը շտապելով ձեռքի տուփը անոր կու տա ու  
յարգալից ետ կը քաշէ սանդուղին վրա՝ անոր ճամբա տա-  
լով): Դեռ նոր եկա, հիմա: Ըամբան պատահեցա  
քրոջս տղուն:

**Հարենց** — (Սանդուղներէն իջնելով ծանր-ծանր ու մեկնոյն ժա-  
մանակ տուփը բանալով): Հա՛, սա քու աղջականդ:  
Տիկինս անցած օր բաներ մը կ'ըսէր: (ձաղալն տակէն  
Վահրամը դիտելով): Ոչի՛նչ. կարի՛ճ տղա կ'երևնա:  
(Մարգարին) Դուն գնա՛ բանիդ:

**Մարգար** — (Դուրս):

**Հարենց** — Ի՞նչ է հրամանքիդ անունը:

**Վահրամ** — (Ժպտուն): Անունս Վահրամ է, Վարդանեան:

**Հարենց** — Հա՞. Վարդանեան՝. ատ ի՛նչ շատ ալ Վար-  
դան կա դուրսեցիներուն մէջ:

**Վահրամ** — (Կտրուկ): Իսկ ե՞ս որու հետ պատիւ ունիմ  
խօսելու:

**Հարենց** — (Ձարմանքով): Ատիկա կարծեմ գիտնաս պիտի:

**Վահրամ** — Իդուր տեղը կը կարծէք:

**Հարենց** — (Խոժոռ ու հատիկ-հատիկ): Ինծի Հարենց Արթին  
կ'ըսեն Պօլսի հրապարակին վրա. աս ամարանոցին  
ալ տէրը:

**Վահրամ** — Այո՛ . ձեր ամարանոցը չատ սիրուն է , մանաւանդ դիրքը : Ուփորի այս սքանչելի կտորին վերա , Սե ծովի զով շունչին դիմաց :

**Հարենց** — (Շոյւած) : Իրաւայի՛ ես . լաւ ճաշակ ունիս , խնայէս կը տեսնեմ : (Այդ միջոցին բացած է արդէն ձեռքի տուփը , հատ մը հաւանս կը հանէ մէջէն , կը դնէ շորթունքին , տուփը սեղանին ու կը վերցնէ լուցկին) : Հա՛ , ի՞նչ պիտի հարցնէի . երեւի , դո՛ւն...

**Վահրամ** — (Նիծաղկոտ) : Ես «դուն» չեմ , ներեցէ՛ք :

**Հարենց** — (Զարմանքէն անշարժ կը մնա վառած լուցկին ձեռքը) :

**Վահրամ** — «Ի՛նչ» :

**Հարենց** — (Առանց դէրժն ու թոնը փոխելու) : Ես կ'ուզէի հարցընեմ . դու... ուք , երեւի կը ճանչնաք հոստեղի բոմիտն . ի՞նչ տեսակ մարդիկ են :

**Վահրամ** — Ինչո՞ւ կը կարծէք , որ ես ճանչնամ պիտի բոմիտն :

**Հարենց** — Է՛ , անանկ : Դուրսեցի աղա , հոս-հոն կը մտնէք , կ'եղնէք , վերջապէս երիտասարդ ալ էք : Երիտասարդ մարդը ատ տեսակ բաներով կ'ոգեւորւի , յեղափոխութիւն կ'ուզէ , ազատ ըլլալ կ'ուզէ , իր պարլամենտը կ'ուզէ , ալ ի՞նչ գիտնամ :

**Վահրամ** — Է՛ , աշխարհքիս ո՞ր ծայրը ապուշներ չը կան :

**Հարենց** — Այո , ապրի՛ս : Իսկոյն կ'երեւնա որ հասուն աղա ես : Շիտակ է , ո՞րտեղ ապուշներ չը կան , Բայց երանի թէ միայն ապուշ ըլլային , մտրինները աւազակ ալ են , աներես , լիրբ աւազակներ , աւազակներուն ամենէն գէշը . աւազակը գոնէ զիչերը , մուրթին մէջէն , ծածուկ անկիւնէ մը կը յարձակի վրադ . իսկ աս սրիկաները օրը ցերեկով քու սեփական բռնակաւ աս սրիկաները օրը ցերեկով քու սեփական բռնակաւ աս սրիկաները մէջը քեզի կը կոխեն : Ու դուն դեռ սուս ու փուս նստիս պիտի հետեւնին խօսիս , ճա՛րդ ինչ . կատաղած մարդիկ :

**Վահրամ** — Միթէ ձեզի նեղե՞ր են :

**Հարենց** — Նեղե՞ր են , մի՞ : Հապա Մարգարը քեզի չէ՞ ըսեր : Երկու հարիւր յիսուն հատիկ դեղին ոսկիս առին ձեռքէս : Այ խնդիրք , համոզել , սոլառնալիք , ոչինչ չօգնեց : «Դուք դիտէք . մեր ձեռքէն ոչինչ չի դար . մեզի այնպէս է հրամայւած» : Վրանին ալ որ նայիս , լորտ կը նմանին , հագւած սքւած :

**Վահրամ** — (Կատակով) : Է՛ , ի՞նչ ֆնաս ունի , պարո՛ն Հարենց , ձեզի համար երկու հարիւր յիսուն ոսկիին խօսքը կ'ըլլա :

**Հարենց** — Հա՛ , աղբար , բայց մարդուս ճաթիլը կու գա . սա՛նկ խէզին մէկը գա անցնի դիմացդ , խընդա , խօսի ու առանց մատը մատին դպցնելու , գրպանէդ ուզածը առնէ ու երթա : Եւ վերջապէս երկու հարիւր յիսուն ալ ծովը նետւելիք փարա չէ : Աղէ՛կ , առնելիքնին ըլլա . չեն մարսեր . ինծի Հարենց Արթին կ'ըսեն , չեմ ձգեր , որ մարսեն , ես անոնց քիթէն բերնէն կը հանեմ : (Ու բարկացած կը վառէ սիկառը) :

4 .

**Մարի** — (Նուրբ ու հանգիստ սղջիկ մը , քսան-քսաներկու տարեկան . դէմքն ու խօսւածքը երազուն կու գայ ծովուն կողմէն ծառերուն մէջէն : Հազուադ թեթեւ ու ճերմակ , ճերմակ դոց հովոնոց մըն ալ դրած է վիզը , ու թւերն ալ երկու կողմէն անոր վրա) : Վա՛յ , պարո՛ն Վահրամ :

**Վահրամ** — Բարե՛ ձեզ , օրիո՛րդ Հարենց :

**Մարի** — Ո՛ւր էք , չէք երևար այս քանի ժամանակ է . երեւի չախորժեցաք մեր կողմերն :

**Հարենց** — (Տհաճ ու դրդուած) : Իսկ դուն ի՞նչդ ուր ես , մէջտեղ չը կաս . ժամ մըն է մայրդ քեզի կը հարցնէ . ի հարկէ , ի հարկէ նորէն ծովուն ափը : Հո-

գիդ սիրե՛ս, սիրտդ ալ չի նեղանար ատանկ ժամե-  
րով աւաղին վրա. նայէ՛, հա՛, նայէ՛. ի՞նչ կա՝  
չգիտեմ որ: Աս ծով, աս ջուր, աս ալ աւաղ. չը՛ռփ  
չը՛ռփ, չը՛ռփ. քունդ ալ չի տանիր. չիտակը հինգ  
վայրկեան որ հոն նստիմ, իմ քունս կու գա:

Մարի — Դուն ուրիշ. դուն ուր որ ալ նստիս, հինգ  
վայրկեանէն քունդ կու գա:

Հարենց — (Սեղանէն սեղանի տուփը վերցնելով): Քալէ՛, քալէ՛  
պարապ մի՛ խօսիր. գնա՛ նայէ մայրդ ի՞նչ կ'ըսէ:  
(Սանդուղի ոտքին կանգ կ'առնէ, կատակածով կը նայի վահ-  
րամին ու տեսակ մը մտերմօրէն): Գիտէ՛ք ի՞նչ կա. ինչ  
որ խօսեցանք, աղէկ է, որ մեր մէջը մնա. բերնէ  
բերան խօսքը կը մեծնա. կը հասկընա՞ք, չէ՞. իսկ  
ատ անպիտանները բոլորը կապը կտրած մարդիկ են,  
ամեն բան կրնա սպասելի: (Ծիծաղկոտ): Ինչ որ խօ-  
սեցանք, սա՛նկ մեր մէջը, հա՛:

Վահրամ — (Չգլանքով): Անհոգ եղէք, պարո՛ն: Ո՞վ է  
այս աստիճանի ողորմելի մարդոց մասին բերան  
բացողը:

Հարենց — (Չըմբռնելով): Ինչպէ՞ս... (Յանկարծ, անուշիկա-  
պելով) Այո՛, այո՛, չա՛տ ապրիս, չնորհակալ եմ:  
Երթա՛ս բարով, ասանկ երբեմն-երբեմն այցելեցէ՛ք  
նորէն մեր Մարգարը. ես չատ գո՞ եմ իրմէն, աս  
երեք տարի է մեր ծառայութեանն է: (Սանդուղիներով  
կը բարձրանայ ու կը մտնէ տուն):

5.

Մարի — (Լուրջ ու բռունցքը սեղմած): Եղբայրս վիրաւորեց  
ձեզի: Պէտք չէ՛ որ վիրաւորւիք, պարո՛ն Վահրամ:

Վահրամ — Բայց ամենեւին, օրիո՛րդ, մտքէս չանցնիր:

Մարի — (Սրտանց): Այո՛, ատանկ. չատ ուրախ եմ:

(Եւ յանկարծ խօսքը փոխելով): Է՛, ի՞նչպէս էք, դո՞ն  
էք, մեր Պօլսէն:

Վահրամ — (Ուսը կը ցնցէ): Ի՞նչ ըսեմ. ինծի քիչ կը հե-  
տաքրքրէ:

Մարի — Ի հարկէ՛, դուք այնքան տեղ էք եղեր, այն-  
քան տեղ էք տեսեր:

Վահրամ — Ա՛խ, ո՛չ այդ պատճառով:

Մարի — Հապա՛:

Վահրամ — Բայց ներեցէ՛ք, օրիո՛րդ, ձեզի չը խան-  
գարեմ, կարծեմ ըսին, որ ձեր մայրը ձեզի կ'ըս-  
պասէ:

Մարի — Ոչ/ինչ. փոյթ չէ:

Վահրամ — (Յանկարծ): Ուրեմն դուք այդպէս կը սիրէք  
ծովը:

Մարի — (Չարմանք ու ժպտուն): Այո՛. ինչո՞ւ հարցուցիք.  
եւ չա՛տ: Ես չատ կը սիրեմ թէ՛ իր հանգիստ ժա-  
մանակը, իր օրօրքը, թէ՛ իր աշկոծութիւնը,  
իր խռովքը. բայց մանաւա՛նդ այդ աշկոծութիւնը,  
մարդ կարծես կը փոխւի, կը յափշտակւի, կը մոռնա  
աշխարհքն ալ, ինքըզինքն ալ, իր ախրութիւնը,  
իր վիշտը:

Վահրամ — (Կը խնդա թեթեւ):

Մարի — (Կոտորած): Ինչո՞ւ կը խնդաք:

Վահրամ — Ներեցէ՛ք, օրիո՛րդ, բայց այնպէս տարօ-  
րինակ է այդ բառերը ձեր շրթունքին. ախրութիւն,  
վիշտ:

Մարի — Դուք անցած անգամ ալ ստոյր նման բան մը  
ըսիք ինծի. եւ գիտէ՞ք, ինծի չատ զայրոյթ պատ-  
ճառեց:

Վահրամ — (Լուրջ): Իրա՞ւ: Ներեցէ՛ք, կը ցաւիմ ես...  
եւ միայն ըսել կ'ուզէի... ձեր չուրջը գեղեցկու-

թիւն, առաւօթիւն, գուրգուրանք ու քնանք.  
դուք այդպէս գեղեցիկ, այդպէս երիտասարդ. ձե-  
զի համար ի՞նչ վիշտ, ի՞նչ տխրութիւն. ատոնք  
բառեր են, որոնց իմաստը դուք չգիտէք բարե-  
բաղդաբար: Բնութիւնն ու քաղաքակրթութիւնը  
ձեր վրան առատ թափեր է ամեն սլարգեւ. դուք  
վայելքի ու զւարթութեան համար էք ծնւած:

Մարի — (Հեգնոտ): Իրա՞ւ: Շատ շնորհակալ եմ:

Վահրամ — (Յանկարծ): Չէ՞, չէ՞, այդպէս չէ՞:

Մարի — (Սառն): Թողէ՛ք խնդրեմ: Ուրիշ բան խօսինք:

Վահրամ — (Ջերմ): Դժգո՞հ էք. դո՛ւք ալ էք դժգոհ:  
Չէ՞. ըսէ՛ք, ըսէ՛ք սլարդ. այս բոլոր փարթամու-  
թիւնը ձեզի ձանձրոյթ կը պատճառէ ու բոլոր այս  
միջավայրը ձեր սրտին ոչինչ չի խօսիր, չէ՞, ըսէ՛ք:  
Ա, ես գիտէի, ես զգացի. ձեզի հետ առաջին խօ-  
սելուս զգացի:

Մարի — Ձգացի՛ք. ինչո՞ւ:

Վահրամ — Որ դուք ալ դժբաղդ մէն էք:

Մարի — Եւ ուրախ էք՝ ինչպէս կը տեսնեմ:

Վահրամ — Այո՛. ինչո՞ւ ծածկում:

Մարի — Իսկ ես չէի երեակայեր, որ դուք այդպէս չար էք:

Վահրամ — Չա՛ր: Մի՞թէ ասիկա չարութիւն է: Թե-  
րեւ՛ս. չգիտե՛մ: Յամենայն դէպս այսքանը ճիշտ է,  
որ մասնաւոր պատճառ մը չունիմ բարի ըլլալու:

Մարի — Ինչո՞ւ:

Վահրամ — Է՛, թողնե՛ք:

Մարի — (Սրտոնց): Ո՛չ. ըսէ՛ք. պէ՛տք է որ ըսէք:

Վահրամ — Ի՞նչ ըսեմ ձեզի: Ինչի՞ նման է ինծի պէս  
մարդուն կեանքը: Ուրիշներու մանկութիւնը գոնէ  
ունի իր երջանիկ երազները. ես միայն պանդխտու-  
թիւն տեսա ու կարիք: Ամբողջ պատանութիւնս  
անվերջ ճանկրուտո՛ւք մը եղաւ ու անվերջ թափա-

ռո՛ւմ պատառ մը հացի համար ու պատառ մը  
ուսման: Եւ ի՞նչ աս ի՞նչ երիտասարդութիւն է.  
կատաղած շան զայրոյթը սրախ մէջ, ամբողջ մոր-  
թւող ժողովրդի մը մորմոքը կոկորդիզ, ակռանե-  
րուդ տակ վրէժի խածած, խակ շուրջդ հլու, խո-  
նար, լքում ու վախ, մարդ չը կա, օռնականու-  
թիւն չը կա, հոգիի շարժում չը կա, ազատ վե-  
րերու խոյանքը չը կայ:

Մարի — (Երազկոտ): Այո՛, ազատ վերերու խոյանքը...

Վահրամ — Կայ միայն քնազդական ապուշ ցանկութիւն  
մը տոկալու. թող խլին, թող խեղդեն, թող գրի-  
խու տան, թող առեւանգեն, ի՞նչ կրնանք ընել,  
միայն թէ կերպ մը դիմանանք, քաշ տանք մեր գո-  
յութիւնը: (Բարկացած): Ինչո՞ւ. ինչի՞ է պէտք այդ  
տեսակ գոյութիւնը: Ատիկա մա՛հ է, մահ, ամենա-  
սոսկալի մահը. հոգիի մահն է ատիկա: Կծկւեր է  
մեր մէջ հոգին. ո՛չ ցանկալ գիտէ, ո՛չ ձգտում ունի  
իր ցանկացածին պէս ապրելու, ո՛չ կոխ գիտէ, ո՛չ  
դիմադրութիւն, ո՛չ նոյնիսկ մեռնիլ գիտէ այդ հոգին:

Մարի — (Երազկոտ): Այո՛, կծկւեր է մեր մէջ հոգին. մենք  
ո՛չ ցանկալ գիտենք, ո՛չ ալ մեր ուզածին պէս ապրիլ...

Վահրամ — (Յանկարծ կ'ընթափի ու զարմանքով շեշտ կը նայի անոր):  
Մարի — Այո՛, մենք մեռնիլ անգամ չգիտենք:

Վահրամ — Ուրեմն դո՛ւք ալ համաձայն էք, օրիո՛րդ:

Մարի — (Միշտ երազկոտ) Այ, այո՛, այո՛, բացարձակապէս:

Վահրամ — Ներեցէ՛ք, ձեզի տխրեցուցի: Իսկ ես, օրի-  
ո՛րդ, չէի ուզեր ձեր յիշողութիւններուն մէջ գէշ  
քոչմարի մը տպաւորութիւնը թողնեմ: Եկէ՛ք քիչ  
մըն ալ ուրիշ բան խօսինք. աւելի ուրախ բան մը,  
աւելի յարմար այս սքանչելի չրջապատին: Տեսէ՛ք,  
ի՞նչ գեղեցիկ է այս օդը, այս ծովը, այս առտուն:

Մարի — (Ծանր ու մեղմ): Այո՛. այս օդը, այս ծովը, այս առ-  
տունը (Յանկարծ յափշտակած ու հառու): Այո՛, առտուն:

Վահրամ — Այսի՞նքն, օրի՞րդ...

Մարի — Տէ՛ք ձեր ձեռքը: (Իրարու ձեռք բռնած):  
Ուրեմն առտո՞ւ:

Վահրամ — Ձեզի ի՞նչպէս հասկնամ, օրի՞րդ:

Մարի — (Հնչուն ծիծաղով մը): Ի՞նչպէս որ կը կամենաք:  
(Աշխուժ կը խէ ձեռքը, կը վազէ սանդուղներէն վեր. ու  
սանդուղի դնէն): Ի՞նչպէս որ ձեզի համար աւելի ա-  
խորժելի է: (Կը մտնէ տուն):

6.

Վահրամ — (Կեցած է արձանի պէս, աչքերը շեշտ նոյն կէտին,  
անշարժ, անձպտուն):

Մարգար — (Քիչ մը ետքը կը մտնէ ներս, զարմացած կը նայի  
անոր ու մօտենալով): Ի՞նչ բանի ես հոս մինակ:

Վահրամ — (Յնդեւելով): Դո՞ւն ես:

Մարգար — Ի՞նչ կա հոն: Դե՞հր ես տեսիր, թէ՞ փե-  
րիներ: Շատո՞նց է, որ էֆէնդին գացեր է: Ան ի՞նչ  
կ'ըսէր քեզի: Քալէ՛ հրթմաք, ներսը կը խօսինք.  
ձեռքս գործ ունիմ:

Վահրամ — (Ստրուկ): Ո՛չ. ես դառնալու եմ քաղաք:

Մարգար — Վա՛յ. չէ՞ որ հիմա եկար քաղքէն:

Վահրամ — Մէ՛ղ է: Ձէ՛, ես հոս մնալ չեմ կրնար: Հոս  
ձեր օդը, ջուրը, չղիտե՛մ, հոս ամեն բան ուրիշ  
տեսակ է: Արդէն զալս ալ աւելորդ էր. ինչպէս  
եղաւ, չի կրցայ, ելա եկա:

Մարգար — Ինչե՛ր կը խօսի այս խելառը: Ի՞նչ է պա-  
տահեր քեզի:

Վահրամ — Խելա՞ռ... (Հեղնոտ): Երե՛ի. թէ չէ... Է՛,  
իհարկէ խելառութիւն: (Յանկարծ աշխուժ ու զւարթ,  
պինդ-պինդ զարնելով Մարգարի ուսին): Մ՛նաս - բարով,  
մնաս-բարով, մնաս-բարով: (Դէպի պարտէզին դուռը):

Մարգար — Վա՛յ. իրա՛ւ որ խննթ է:



ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐ

Ընդարձակ հաշի սենեակ մը :

Ճակատը դուռ , որ լայն ու պայծառ լուսաւորւած միջանցքը կը տանի : Աջ կողմը բարձր ու խոր պատուհաններ : Ձախ պատը գրեթէ ամբողջապէս բռնած է ընկուզէ ահագին հաշի դարանը : Սենեակին մեջտեղը մեծ ու հաշակաւոր սեղանը , աթոռները նոյնպէս մեծ-մեծ ու կաշի : Սեղանին վրա կախւած է խոշոր չվառած լամպ մը : Թանձր վարագոյրներ դռան ու պատուհաններուն : Վառ է միայն մոմ մը դարանին առջեւը :

1.

(Տեսարանի սկզբին միջանցքով կ'երթան ու կու գան տանեցիք , ծառա մը , երկու սպասուհի , ափսէներով , խմիչներով , առաններով) :

**Մարի** — (Բաց պատուհանին դէմը փռւած է օրօրան աթոռին ու դէմքը հովուին տւած կ'օրօրուի՝ ձեռքերը դրած գլխուն տակը) :

**Նեկտար** — (Տեսքոտ կին մը , նեղճակատ , զուգւած ու փարթամ . կ'երևա սեմին վրա) : **Չէս լսեր . քեզի՛ կ'ըսեմ : Ելի՛ր :**

**Մարի** — (Անփոյթ օրեւելով) : **Ըսէ՛ տունը չեմ :**

**Նեկտար** — **Տունը չե՞ս , կէս-գիշերի՛ն :**

**Մարի** — **Ըսէ՛ հիւանդ եմ :**

**Նեկտար** — **Է՛ , ո՛վ պիտի խաբես :**

**Մարի** — (Համբերութենէ ելած) : **Ըսէ՛ մեռեր եմ :**

**Նեկօար** — Բու. խելքի՛դ է եկեր: Մտմտա՛ անդամ մը  
ըրածդ: Տիկին Մեղքոնը, Թուռուղները, Արալեան-  
ները. ամօթ չէ՞. ես ի՞նչ ըսեմ անոնց:

**Մարի** — (Գրգռւած, կը դադրեցնէ օրելը ու կը դառնա հար-  
սին), Կ'ըսես որ մեռե՛ր եմ, հասկըցա՞ր, մեռե՛ր եմ,  
մեռե՛ր եմ ես անոնց համար: Ո՞վ են ատոնք, Թու-  
ռուղ-Մուռուղ, ես չեմ ճանչնար, չեմ ուղեր ճանչնամ:

**Նեկօար** — Սըւոր նայեցէ՛ք. մարդու ալ որ չի հաւնիր.  
ինչի՛դ վրա ես ատանկ քիթդ վեր քաշեր: Հարկնցին  
աղջիկը, մե՛ծ բան. ուրիշներուն աչքերը կապեցէ՛ք.  
ետեւնիս պարտքով լեցուն. ատոր վրա՞ ես հպար-  
տացեր:

**Մարի** — (Վեր թռչելով նստած տեղը): Ինչե՛ր կը խօսիս,  
այ՛ կնիկ: Հիւր է եկեր, գնա՛ ներս, նստէ՛, խօսէ՛.  
ատանկ նշանաւոր մարդիկ, գնա՛, ինծմէ ի՞նչ կ'ու-  
զես: Ես չե՛մ ուզեր, չէ՛, ես կշտացե՛ր եմ ատ բո-  
լորէն. մինչև հոս, կոկորդոս է հասեր ձեր ու անոնց  
ըսածն ու խօսածը:

2.

**Հարենց** — (Ներս մտնելով): Նորէն կը կըղձալի՞ք հարս ու  
տալ:

**Նեկօար** — (Վրա փրթելով): Հա՛, կը կըղձալի՞նք, քէ՛ֆդ  
եկաւ. քեզի ալ խօսելու բան է պէտք:

**Հարենց** — Չէ՛, չէ՛, ես քեզ մեղայ, ըսողը ես չէի.  
բարի յաջողո՞ւմ. կըղւեցէ՛ք, կըղւեցէ՛ք: (Կ'ուզէ  
դուրս):

**Նեկօար** — Կեցի՛ր: Կեցի՛ր ու լսէ՛. նայէ՛ քուրիկդ ին-  
չե՛ր կ'ըսէ. նայէ՛, ի՞նչ նորութիւններ, բերանդ բաց  
մնա:

**Հարենց** — Հապա՛ նայինք:

**Մարի** — (Յոգնած ու տղերսող): Է՛, թողէք ինծի հանգիստ:  
Ի՞նչ կ'ուզէք ինծմէ. թողէ՛ք ինծի իմ մտքիս հետ:

**Հարենց** — Մտքինդ ի՞նչ է որ:

**Մարի** — Քեզի՞ ինչ. որ ըսեմ՝ ի՞նչ պիտի հասկնաս:

3.

**Մայր** — (Իէր ու տկար. գեղեցիկութեան մնացորդ. շտապելով  
կը մտնէ սենեակը): Շո՛ւտ, չու՛ւտ, նե՛րս. հիւրերը  
բոլորովին միակ են մնացեր:

**Նեկօար** — (Ծողրելով իր ամուսինը), Ա՛ռ քեզի, Հասկե՛ա՛ր  
հիմա: Աս մէ՛կ, (Չանչ տալով տալով): Ը՛հ, վերի  
արտին ցորենը: (Դուրս):

4.

**Մայր** — Ի՞նչ կա նորէն: Աս լամպը ինչո՞ւ չեն վառեր:

**Մարի** — Ես ըսի՛ չվառեն.

**Մայր** — Ինչո՞ւ:

**Մարի** — Ասանկ աւելի աղէկ է, աւելի սուսնձին. ձգէ՛:

**Հարենց** — Կ'երևնա, չուտով ճղնաւոր ես դառնալու:

**Մարի** — Ի՞նչ կայ որ: Աս անհամ-անհոտ կեանքէն հա-  
զար անգամ աւելի աղէկ չէ՞:

**Հարենց** — Անհամ-անհոտը դուն ի՛նքդ ես, ի՛նքդ,  
կեանքը ինչո՞ւ կը մեղադրես: Ո՛չ քաղաքավարու-  
թիւն գիտես, ո՛չ մարդավարի ըսել-խօսիլ, ո՛չ չորջր-  
եղող երիտասարդներուն հետ վարել: Ի՞նչ բանի  
վրա կը տրանջաս: Փա՛ռք Աստու, ի՞նչդ ենք  
պակաս ըրեր:

**Մայր** — Ձգէ՛, ձգէ՛ աղջիկը հանգիստ. գնա՛ ներս:

**Հարկնց** — Չգիտեմ: Քանի կ'երթա ատ աղջիկը տա-  
րօրինակ կը դառնա: Իսկ աս տառ-տառներէնդ օրը  
բոլորովին է անհամցեր: Շատ հոգս: (Դուրս):

5.

**Մայր** — Հաւ բնութիւն չէ, աղջիկս, չիտակ կ'ըսէ:  
Հայրդ ալ ճիշտ քեզի պէս էր, անձ, ի՞նչ տարա-  
աշխարհէն: Ըսէ՛, խօսէ՛, կե՛ր, խմէ՛, քէֆդ նա-  
յէ՛: Աշխարհքը աս է որ կա: Այ ուրիշ ի՞նչ կ'ու-  
զես, ի՞նչ կը մտմտաս, ի՞նչ կը փնտռես:

**Մարի** — Իրա՛ւ: Աշխարհքը աս է, որ կա. ասանկ ան-  
շարժ, ասանկ պաղած, ասանկ տափահ: Ոչ, մայ-  
րի՛կ, աշխարհքը աս չէ, որ կա: Աշխարհքը մէկ  
ուրիշ տեսակ է, ես դեռ կ'ըսպասեմ, աշխարհքը  
դեռ պիտի գա. աւելի տա՛ք, աւելի թա՛րմ, աւելի  
վնճր... Անկա դեռ պիտի գա: (Կտրուած): Եթէ  
չը կա, եթէ պիտի չը գա, ալ ի՞նչի է պէտք այս  
կեանքը:

**Մայր** — (Յնկեւելով աղջկա աթոռին ու շոյելով անոր մողերը):  
Ատանկ մի՛ խօսիր, զաւակս. մե՛ղք է: Նորէն փառք  
տուր Աստծու: Ելի՛ր, կլի՛ր. հոգի՛ս. գնա քիչ մը  
վրադ-գլուխդ կարգի դիր ու ներս եկուր: Աղէկ  
չէ, որ չերեւաս: (Կը համբուրէ ծակատը ու դուրս):

6.

**Մարի** — (Անշարժ ու անծպտուն փռած է իր աթոռին):

**Մուսնոյ** — (Քիչ մը ետքը կ'երևա դռան մէջ, Ածիւտած դէմք,  
երկար մազեր, երկտը սև փողպատ): Կարելի՞ է, օրիորդ:

**Մարի** — (Առանց դիտել փոխելու): Ո՛չ:

**Մուսնոյ** — Վա՛յ, ներեցէ՛ք: (Քաշելի կռկէ):

**Մարի** — (Առանց դիտել փոխելու): Եկէ՛ք, եթէ միայն ձեզի  
զրկող չէ եղեր:

**Մուսնոյ** — (Մօտենալով): Դրկո՞ղ. քա՛ւ լիցի: Ըսին միայն՝  
քիչ մը տկար էք:

**Մարի** — Սո՛ւտ են ըսեր:

**Մուսնոյ** — (Քծիծաղ): Այո՛, կը հասկնամ. ներսի օդը  
անպէս, քիչ մը... Ի՞նչպէս ըսեմ... Թէեւ պա-  
տուհանները բաց են:

**Մարի** — Պատուհանները բաց են, բայց հոգիները գոց:

**Մուսնոյ** — (Ժպտուն): Կարճ ու աղքատ:

**Մարի** — Նստեցէ՛ք:

**Մուսնոյ** — Շնորհակալ եմ: (Աթոռ մը առնելով):

**Մարի** — Ո՛չ, հո՛ս ինծի մօտիկ:

**Մուսնոյ** — (Նստելով): Թէեւ... ասիկա քիչիկ մի: հակա-  
ռակ է իմ սկզբունքներուս:

**Մարի** — Հակառակ. ի՞նչը:

**Մուսնոյ** — Կրակէն ո՛չ այնքան հեռու, որ մրսիս, ո՛չ  
ալ այնքան մօտիկ, որ այրիս:

**Մարի** — Է՛, դուք միակ մարդն էք, որուն հետ խօսիլ  
կարելի է, դուք ալ լուրջ խօսիլ չգիտէք:

**Մուսնոյ** — Կը ցաւիմ, օրիորդ: Բոլոր առաքինութիւն-  
ները միասին չեն ըլլար:

**Մարի** — (Յանկարծ ուղղւելով ու ջերմ): Իսկ ե՛ս, ես ընդ-  
հակառակը, կ'ստեմ ձեր այդ գոլ սկզբունքը:

**Մուսնոյ** — (Երծաղելով): Գո՛ղ:

**Մարի** — Այո՛: Թէ սառն է՝ սառույց, թէ տաք է՝ կրակ.  
բայց ո՛չ երբեք այդպէս գոլ ու գաղջ:

**Մուսնոյ** — Բայց սառույցն ու կրակը կը մաշեն մարմինը:  
Եւ այն ստեմ ի՞նչ կը մնա ձեր այդ սքանչելի կեր-  
պարանքէն:

Մարի — Թողէ՛ք այդ յիմար հաճոյախօսութիւնները, թէ  
չէ, ա՛յ, ձեզի ալ կը դրկեմ ներս, անոնց քովը:

Յուանդ — (կուրջ): Ներեցէ՛ք: Ես իբրեւ քանդակագործ  
կը պաշտեմ մարմնի ձևերն ու անոնց գեղեցկու-  
թիւնը. ու կ'ատեմ այն բոլորը, որ այդ ձևերը կը  
խաթարէ. ես կ'ատեմ մահը, ես կ'ատեմ վիշտը,  
ես կ'ատեմ բոլոր բուռն յուզումները:

Մարի — Իսկ ես քանդակագործ չի՛մ, պարոն Յուանդ:

Յուանդ — Բայց մտէ՛լ, և սքանչելի մոտէ՛լ: Եւ վերջա-  
պէս մի՛ մոռնաք, որ սառն ու հաւրը կը մաշեն և  
կեանքը: Այդ քեռներով քառասունի ալ չէք հասնիր:

Մարի — (Ծիծաղ): Քառասո՛ւն. կեանքը քառասո՛ւն տարի:  
(Ոգեւորւած): Կեա՛նքը, բարեկա՛մ, օ՛ր մըն է մի-  
այն, օ՛ր մը:

Յուանդ — Խօսք է ատիկա: Երբ գլուխնիդ կապած  
նստիք անկիւնը ծալլապատիկ և երբ ձեր թոռները  
դան ձեր ճերմակ մաղերը քաշքշկու, ա՛յ, ան ա-  
տեն կը խօսիմ ձեզի հետ կեանքի մասին:

Մարի — (Կ'իյնա աթոռին ու օրելով): Խորհուրդ կու տամ,  
որ հիմակւընէ վնասէք ձեզի ուրիշ խօսակից:

7.

Մարգար — (Սեմէն): Օրիո՛րդ:

Մարի — Ի՞նչ է:

Մարգար — Վահրամն է եկեր, կ'ըսէ՝ ըսելիք ունի ձեզի:

Մարի — (Ոտքի): Աղէ՛կ. կանչէ՛ հոս:

Մարգար — (Վարանոտ): Հո՞ս:

Մարի — Այո՛. բեր հո՛ս:

Մարգար — Հիմա՞:

Մարի — Այո՛. իսկո՛յն:

Մարգար — (Դուրս):

8.

Յուանդ — Ձեզի չը խանդարե՛մ:

Մարի — Դեռ ո՛չ: (Ժպտուն): Երբ որ խանդարէք, ձեզի  
խմաց կու տամ: Ծանօթ է ձեզի:

Յուանդ — Մի՞թէ: Ո՞վ է որ:

Մարի — Մեր Մարգարի քրոջ տղան:

Յուանդ — (Հեգնոտ), Ներեցէ՛ք, պատիւ չունիմ ծանօթ  
ըլլալու:

9.

(Վահրամ ու Մարգար կ'երևան դռան մէջ: Մարգար կը  
քաշէի ետ: Վահրամ քայլ մը կ'ընէ ներս և օտարի հանդիպելով  
կանգ կ'առնէ ունքերը կիտած):

Յուանդ — (Աշխուժ դէմը վաղեմով): Վա՛հ, Վահրա՛մ:

Վահրամ — (Ձարմացած): Դուն հոս ի՞նչ գործ ունիս:

Յուանդ — Ես դրացի մօրդ եմ, իմ մէկ ոտքս միշտ  
հոս է: (Երկսիտ): Դուն հոս ի՞նչ գործ ունիս:

Մարի — Իսկ ինձի արդէն բոլորովին մոռցաք:

Վահրամ — (Օրիորդին ձեռք տալով): Այս քանի՞ տարի է,  
չէի տեսեր: (Երևանդին): Երե՛ք, չո՛րս: Հը՛. քու  
Փարիզի շշանաւոր ստղիկէդ մի՛ տքդ է:

Յուանդ — Բայց ամենէին չի՛ս փոխեր: Անշո՛ւշտ, միշտ  
ալ նոյն իդէալիստը, չէ՞: Ա՛խ, դո՛ւն: Աւարտեցի՛ր:

Վահրամ — Ո՛չ, ինձի պէս մարդիկը իրաւունք չունին  
աւարտելու: Եւ վերջապէս (ձեռքը թափ տալով) ին-

չո՞ւ համար: Իսկ դո՞ւն. նորէն քու ցեխերո՞ւդ հետ ու ծեփերուդ:

**Մուանդ** — Ի հարկէ՛: Բանով մը կեանքը պէտք է լեցընենք, թէ չէ. ցեխը ինչո՞վ է պակաս: Շատ ժամանակ է, որ Պոլիս ես:

**Վահրամ** — Այսպէս, ամիս մը:

**Մուանդ** — Ու կը մնաս երկա՞ր:

**Վահրամ** — Ո՛չ:

**Մուանդ** — Եւ ո՞ւր:

**Վահրամ** — Երկիր:

**Մուանդ** — Երկիր. հիմա՞. այդ հալածանքին ու սարսափներուն մէջ:

**Վահրամ** — Այդ հալածանքին ու սարսափներուն մէջ ամբողջ ժողովուրդ մը կ'ապրի:

**Մուանդ** — Ատանկ է, բայց... բայց վերջապէս դուն... Եւ ի՞նչ ես ընելու հոն:

**Վահրամ** — Երեւի, ընկիւնք մը կը ճարւի:

10.

**Հարենց** — Պարո՞ն Երւանդ, հո՞ս էք: (Աչքերը լարած կը նայի ներս և յանկարծ Վահրամը ծանշալով կ'ապշի):

**Մուանդ** — Հո՞ս ենք: Հրամայե՛ք դուք ալ: Ծանօթ չէ՞ք:

**Հարենց** — (Խէթ): Կը ճանչնամ, բարեւ: Շատ աղէկ էք ըրեր, որ եկեր էք. երեւի եկեր էք մեր Մարգարին օգնելու:

**Մարի** (Առաջ գալով և կարուկ): Ո՛չ. եկեր է ինձի հետ տեսակցելու:

**Հարենց** — (Կատողած բայց ինքզինքը զսպելով): Ա՛խ. որ

այդպէս է, չը խանգարենք: Պարոն Երւանդ, մենք նստելու ենք վիստի. չէ՞ք ընկերանար:

**Մուանդ** — Սիրով. ես կռիւէ փախչողը չեմ. երթա՛նք: Վահրա՛մ, մենք հոս անմիջապէս դիմացը կը բնակինք, երթալէդ առաջ եկո՛ւր անգամ մը տեսնուինք:

**Վահրամ** — Կը տեսնուինք:

**Հարենց** — (Յամուռ կը դիտէ մէկ մը Վահրամը, մէկ մը էր քայլը մինչև որ դուրս կ'ելլատ Երւանդի հետ միասին):

11.

**Վահրամ** — (Երբ միւսները բոլորովին կը հեռանան, ծանր կը դառնայ աղջկան): Ինձի կանչե՛ր էիք:

**Մարի** — Իսկ եթէ չը կանչէի, դուք ինքներդ դալու չէ՞ք:

**Վահրամ** — Ո՛չ:

**Մարի** — Գիտէ՞ի: (Ժպտուն): Կը տեսնէք, որ մուտք ունիմ ձեր հոգին:

**Վահրամ** — (Յանկարծ): Օրիս՛րդ Հարենց, լաւ է վերջ տանք այս խաղին: Ես կը հասկնամ, դուք սովոր էք չըջապատուած ու պաշարուած ըլլալու: Ես կը հասկնամ, որ դուք վարժուած էք ամենուէն հետն ալ այսպէս... Ինչպէս ըսեմ... Բայց ես, ես չեմ կրնար, ինչպէս ամենքը. ես ուրիշ կերպ կը հասկնամ ձեր վարմունքը: Ծովը թողած օրէն ջուր չը տեսած սպունդի պէս ծարաւ է հոգիս. ծարաւ գգանքի, անուշ խօսքի մը ջերմ ակնարկի մը: Ես... ես չեմ կրնար, ինչպէս ամենքը. ես... (Խօսքը կը կտրէ ու քիչ մը լուռ):

**Մարի** — (Աչքերը դեմնէն ծանր բարձրացնելով խօսակցին) Խօսէ՛, խօսէ՛:

25

**Վահրամ** — (Խեղագործի պէս դէպի աղջիկը վաղելով), **Մարի'**... (Խնդրինքը դադարելով): **Է՛, ես գիտեմ, որ վերջը յիմարտ թխն մը ընելու եմ անպատճառ: Բայց ինչո՞ւ: Ի՞նչ իմաստ: Դուք դեռ չգիտէք ալ՝ ո՞վ եմ ես, ուրիշ՝ կուգամ և կ'երթամ ո՞ր:**

**Մարի** — Եւ ինչի՞ս պէտք գիտնայլ: Ինծի՞ ինչ: Ես գիտեմ միայն, որ դուն եկիր ես, սր դուն հոս ես: Երկա՛ր, շա՛տ երկար եմ սպասեր քեզի, անվե՛րջ չուսցող գիշերներով, ամբողջ երազուն ցերեկներով տարինե՛ր, տարինե՛ր:

**Վահրամ** — Տարինե՛ր:

**Մարի** — Այո՛: Իմ անուրջներս ըսեր էին ինծի, որ գայիր պիտի, և գայիր պիտի ծովէն, անպատճառ ծովէն, այդ ալիքներուն վրայէն, երիտասարդ, ուժեղ ու գեղեցիկ. գայիր պիտի ու դուրս պիտի քաշէիր ինծի իմ մոխրագոյն տաշտուկէս. քաշէիր ինծի դուրս, սեղմէիր կրծքիդ, թող ըլլա օր մը, թող ըլլա անգամ մը. երբ ես ալ ապրէի պիտի վերջապէս, հասկընայի պիտի՝ թէ ինչո՞ւ է տւած մեզի կեանքը, թէ ինչո՞ւ այսպէս յիմարի պէս կը թրփռտա սիրտս կրծքիս տակ, թէ աս ի՞նչ կարօտ է ու սպասում, որ կ'այրէ ինծի: Գոնէ օ՛ր մը, գոնէ օ՛ր մը, երբ ես ալ ապրէի պիտի վերջապէս:

**Վահրամ** — (Կարծես բարկացած, կը խլէ աղջկայ ձեռքը): **Մարի՛:**

**Մարի** — Կը յիշե՞ս մեր առաջին հանդիպումը ծովուն ափը, երբ մահացիկ խրեցաւ մեր ծովեզրի աւաղին ու դուն դուրս ցատկեցիր քու սարդ շարժումովդ, եկար դէպի ինծի ու հարցուցիր Մարգարը քու այդ պարզ ու շիտակ լեզուովդ: Ե՛յդ վայրկեանէն քու

ամեն մէկ խօսքդ սրախ է խօսեր ու քու ամեն մէկ նայւածքդ քու հոգիդ է բացեր ինծի: Եւ ինչքան նման է այդ հոգին իմինիս: Դուն ճիշտ կ'ըսէիր, այս հարուստ միջավայրին մէջ ես միշտ աղքատ եմ եղած, ճիշտ անքան, որքան և դուն:

**Վահրամ** — Ես աղքատ. ո՞վ ըսաւ քեզի: Ես հարուստ եմ հիմա, Մարի՛, անչա՛փ հարուստ, ճիշտ այնքան որքան և դուն:

**Մարի** — Ասոր համար էր, որ իբար կը հասկնայինք ու կը վնասէինք իրար:

**Վահրամ** — (Յանկարծ գրկելով ու համբուրելով): Եւ գտա՛նք իրար, գտա՛նք, գտա՛նք:

(Կը մտնի գրկած, լուռ: Լուռ ալ կը բաժնեն իրարմէ ու աղջիկը կը մօտենայ բաց պատուհանին: Վահրամ քայլ մը ետ կ'ընէ ու կը մնայ անշարժ ձեռքը ձակտնի)

**Մարի** — (Մազերը ետ ընելով ձակտէն ու խոր շունչ առնելով թարմ օդին մէջ): Ա՛խ, Աստուած իմ:

**Վահրամ** — Ո՛չ. դուն պէտք է որ գիտնաս և հէնց առաջին վայրկեանէն: Ես կորսեա՛մ մարդ եմ, Մարի՛. ես աւեր եմ գլուխս ալ, ուժերս ալ, օրերս ալ և բոլորը ինչ որ ունիմ: Ես իմա չե՛մ, Մարի՛, ես երթալու եմ չուտով, ես եկած եմ երթալու համար. երթալու, մեռնելու, որովհետեւ գնացողին դարձ չկա, հոնիէ դարձ չկա:

**Մարի** — (Վրա վաղելով ու դոցելով անոր բերանը): Մի՛, մի՛, թո՛ղ, թո՛ղ հիմա այդ բոլորը, թո՛ղ աշխարհքը, թո՛ղ ամեն բան, մոռցի՛ր ամեն բան: Եթէ կ'ուզես, կը խօսինք ուրիշ անգամ: Հիմա լռէ՛, լռէ՛ ու նա՛յէ՛ աչքերուս. շիտակ, խո՛րը, խո՛րը. այդպէ՛ս... այդպէ՛ս... (Երկու ձեռքով անոր գլուխը բռնած): Ի՛մա, ամբողջովի՛ն իմա, միա՛յն իմա: (Քիչ մը լուռ: Վերջը

Վամաց կը թողնէ գլուխը ու մեղմ)։ Դէ՛, հիմա գնա՛.  
ալ ո՛չ մէկ խօսք. գնա՛. թող ո՛չ-ոք ու ոչի՛նչ չա-  
ղարտէ մեր այս վայրկեանը։ (կը համբուրեն Շշուկով)։  
Գնա՛... գնա՛...

(Վամաց ու խիստ հանդարտ կը բաժնեն իրարմէ ու ջերմ  
կը նային իրար, մինչև որ Վահրամ ծանր կը հասնի դռանը  
ու գլխու վերջին շարժումով մը կ'ելնէ դուրս։ Մարի կեցած  
է արձանի պէս, առանց դիւրքը փոխելու և ո՛չ-մէկ շարժում)։



ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Փոքր ու հասարակ վարձու սենեակ մը :

Դռներ նակտեն ու մեկ կողմէն : Մահնակալ մը ,  
Քանափե , սեղան , երկու աթոռ , մեկ-երկու պայուսակ :  
Ամեն ինչ խիստ հասարակ ու մաքուր :

1.

**Սարիկեան** — (Կարճահասակ , ծանրաշարժ երիտասարդ մը խե-  
լացի աչքերով : Նստած է սեղանին առջևը ու կը հեռակ ըն-  
կերթը ըսածին , աչքերը սեղանին յառած , ուր մոտովը բան  
մը կը գծէ) :

**Վահրամ** — (Կ'երթևեկէ սենեակին մէջ , մերթ կտնդ տունելով  
ընկերոջ դէմը) : Է՛ , դէ՛ ու կոպիտ բան մը կա մար-  
դուս հոգիին խորը , ինչ կ'ուզես ըսէ : Ե՛ս , հիմա  
ուրախանամ մեր գործերու այսպէս ձախ երթալէն ,  
թէ ինչ է՝ ամիս մը կամ երկու դուս հոս եմ մնա-  
լու : Բայց կը հասկնաս :

**Սարիկեան** — Արդէն բոլորովին աւելորդ նորադգացու-  
թիւն է ըրածդ : Դուն ի՞նչ յանցանք ունիս , որ  
մարդիկ են բռնուեր և սր քու երթալդ յարմար չէ  
այժմ . պատահմունք :

**Վահրամ** — Անշուշտ : Բայց որ սիրտս իր խորքէն գոհ  
է այսպէս : Ա՛ , ես կ'ուզէի խեղդեմ այս զգացումը ,  
կ'ուզէի այրեմ , խարեմ , որ հետքն ալ չմնար : Բայց  
ի՞նչ ընեմ , ո՛չ խեղդել կրնամ , ո՛չ կեղծել :

**Սարիկեան** — Է՛ , սիրելի՛ս , մարդ ես դուն ալ :

**Վահրամ** — Այո՛ , չատ անպիտան բան է այդ մարդը :  
(Քիչ մը լուռ) : Ետտ անպիտան և կեանքը , ճիշտ  
հիմա՞ պիտի հանդիպէր այդ էակը ճամբուս վրայ ,

հիմա՞, հո՞ս, երբ մէկ ոտքս չողենաւն է արդէն:  
Եւ ինչո՞ւ, ինչո՞ւ, ի՞նչ իմաստ, ի՞նչ կարիք. միայն  
աւելի վիշտ պատճառելու համար, նո՞ր վիշտ ու նո՞ր  
դառնութիւն. ուրիշ ի՞նչ:

**Մարիկեան** — Ուրեմն կը ցանկայիր, որ այդ աղջիկը  
դէմդ ելած չլլա՞ր:

**Վահրամ** — (Մեղմուղձոտ): Միամիտ: Ինչի՞նչ է նման իմ  
կեանքը, իմ անձնակա՛ն կեանքը, առանց այս եր-  
կու շարթըւան: Անծայր անապատ մը չոր ու տոչոր:  
Ասիկա միակ օազն է, Սարի՛կ, միակ օազը իմ  
ամբողջ ճամբուս վրա:

**Մարիկեան** — (Տեսուր ու երազուն): Օա՛ղ... լա՛ւ ըսիր:

**Վահրամ** — Բաղդի օազը, ուր վայելքի աղբիւրը կը  
գլգլա: (Բեկում): Բայց ահա, աւազէն յոգնած,  
խորշակէն կիզւած, հազիւ ոտք դրած այդ դալար  
վայրը, հազիւ հսկած չոր չրթունքդ այդ յորդ աղ-  
բիւրին, դէ՛, ելի՛ր նորէն ոտքի, մա՛րդ, ելի՛ր ու  
գնա՛՛ ճամբադ, քու ճամբադ մահու, տապի ու  
ու տառապանքի:

**Մարիկեան** — (Մռայլ ու խիստ): Մի՛ տրտնջար: Չէ՞ որ  
դուն խմեցիր բազդի այդ աղբիւրէն. բայց որքա՛ն,  
որքաննե՛ր կան, որ քու ճամբէդ կու գան ու կ'եր-  
թան ու այդ միրաժը չտեսան անդամ:

**Վահրամ** — (Յանկարծ բռնուն շարժումով մը կը դառնա ընկե-  
րօք ու կարեկցոտ): Սա՛րիկ... (Շեշտ ու լուռ կը նային  
երար: կը դառնել դուռը):

## 2.

**Վահրամ** — Մտէ՛ք

**Մարի** — (Սեմէն, Ժպտուն): Կարելի՞ է:

**Վահրամ** — (Դէմը վաղելով): Վա՛յ, ես քեզի դեռ ուշ  
կը սպասէի:

**Մարի** — (Սարկեանին՝ մտերմ): Բարե՛՛ ձեզի: (Վահրամին):  
Ուշ գալ չէի կրնար. արդէն երկար ալ չեմ մնալու.  
հանդիպեցա միայն քանի մը վայրկեանով:

**Մարիկեան** — Ինծի կը ներէք: (Կողմնակի դռնէն դուրս):

## 3.

**Վահրամ** — (Քաշելով աղջկայ ձեռքէն դէպի քանակէն):  
Եկո՛ւր, եկո՛ւր, այնպէս կարօտեր եմ քեզի, այնպէս  
կարօտեր եմ քեզի, կարծես օր չէ, տարի է: (Կը  
գրկէ ու կը նստին իրար կեց):

**Մարի** — Ինչո՞ւ այդպէս ախուր ես նորէն:

**Վահրամ** — Ե՛ս, ախո՛ւր. ամենեւին:

**Մարի** — Է՛. ես չգիտեմ: Ա՛յ, այս ծաղըր ունքերուդ  
մէջտեղը, ա՛յ: (Կը շփէ տղու ճակատը): Ի՞նչ է սլատա-  
հեր նորէն:

**Վահրամ** — Ոչի՛նչ, ոչի՛նչ. քանի որ դուն քովս ես՝  
ոչի՛նչ:

**Մարի** — Իսկ ե՞րբ քովդ չեմ:

**Վահրամ** — (Հառաչով): Հա՛, այն ատեն ասանկ ախոր-  
ժելի հիւրեր չեն ինծի այցելողները. տեսա՛կ մը բո-  
ղոք, ինքս ինծմէ դժգոհութիւն, ներքին խայթի  
պէս բաներ...

**Մարի** — (Ետ քաշւելով ու յանդիմանակաւ): Վահրա՛մ...

**Վահրամ** — Այո՛, այո՛, ես գիտեմ. ինծի պէս մարդը  
իրաւունք չունի անձնական երջանկութեան. այս  
ճամբով գացողը իրաւունք չունի ի՛ր երջանկու-  
թիւնը փնտրուելու:

**Մարի** — Ինչո՞ւ, ինչո՞ւ. ընդհակառա՛կը: Դուն մինչև  
հիմա տւեր ես ամեն բան. դուն մինչև հիմա ըրեր  
ես ամեն բան՝ քու ժողովուրդիդ համար. դուն

վճարեր ես քու պարտքը: Հիմա քիչ մըն ալ ապրէ քեզի համար. թող գան հիմա քիչ մըն ալ ուրիշները, թող չարչարւին քիչ մըն ալ ուրիշները:

Վահրամ — (Խոստում): Ուրիշները իրենց տեղը, ես ալ իմ տեղս:

Մարի — Գիտե՛մ, գիտե՛մ, հոգի՛ս. գիտե՛մ, որ դործի հոգին ես. կը կարծես աչք չունի՞մ: (Հպարտ): Եւ արդէն ուրիշ կերպ կարելի ալ չէ. բոլոր ընկերներդ կը նային քեզի, դո՛ւն ես գլուխը, դո՛ւն, դո՛ւն, դո՛ւն իմ քա՛ջս, դուն իմ արեւս, դուն իմ հերոսս:

Վահրամ — (Կոտորուած ու ծաղրելով): Ի հարկէ, հերոս:

Մարի — Բայց ճիշտ ատար համար ալ քեզի խնայեա պիտի:

Վահրամ — Մարի՛, նորէ՞ն հին երգը:

Մարի — Աղէ՛կ, աղէ՛կ, մի՛ բարկանար. կ'երթա՛ս, երկիր ալ կ'երթաս. հա՛ջը, գարունքն: (Ժպտուն): Կ'երթա՛նք միասին:

Վահրամ — Միասին. դո՛ւն: Երեխա՛:

Մարի — Ինչո՞ւ. միթէ անկարելի՞ է:

Վահրամ — (Կտրուկ): Ատոր մասին ա՛լ խօսք չըլլաւ. Մարի՛: Ատ ուղղութեամբ այլեւս չմտածե՛ս: Երբէ՛ք իմ թեկերս պէ՛տք է որ ազատ ըլլան, մանաւանդ հո՛ն:

Մարի — Աղէ՛կ, աղէ՛կ, ձգէ՛, մի՛ մտածեր: Թող հիմա ապրինք, թո՛ղ որ ծծենք այս վայրկեանները մինչեւ մրուրը, իսկ վերջը թող գա, ինչ որ գալու է: (Ու բոլոր ուժովը կը գալարի տղուն վիզը: Լուռ կը լսի դռան մեղմ բաղխումը: Երկուքն ալ կը ցնցւին ու կը բարձրացընեն գլուխներն):

Մարի — (Բնազդական սարսափով մը ու փսփսուքով): Եկա՛ւ... եկա՛ւ...

Վահրամ — (Եւար): Ո՞վ

Մարի — Չգիտե՛մ... (Ոտքի կ'ենէ տէքերը շփելով ու ջանալով վտիտ դնել): Ի՛նքս ալ չգիտեմ: (Նորէն կը լսէ բաղխումը, քիչ մը աւելի ուժեղ):

Վահրամ — Մա՛յք:

4.

Յանգիկներ — (Չոր կերպարունք մը, կծկւած շրթունքներով): Ան միտ մօրուքով աղան է, լոյն գլխարկով:

Վահրամ — Ո՞վ, ի՞նչ, Հա՛, աղէկ, աղէ՛կ: Տարե՛ք ընկերջա սենեակը, ըսէ՛ք հիմա կու գամ:

Յանգիկներ — (Դուրս):

5.

Մարի — (Սնահադիստ): Ո՞վ է:

Վահրամ — Է՛նկե՛ր մը:

Մարի — Ինչո՞ւ է եկեր:

Վահրամ — Ի՞նչ գիտեմ. երեւի գործ մը: Բայց դո՛ւն ինչու այդպէս վախցար:

Մարի — Չգիտեմ. այնպէս վատ էր. կարծես սիրտս... ձիշա ըսէ՛, Վահրամ, ոչինչ չկա՛:

Վահրամ — Վա՛յ, երեխա՛ ես, ի՞նչ պիտի ըլլա: Ա՛յ, երթամ նայիմ ինչ կ'ըսէ. երկու վայրկեանէն կու գամ:

Մարի — (Վախցած կը բռնէ թեկն): Չէ՛, չէ՛, կեցիր. ես երթամ վերջը. ես արդէն երթամ պիտի: Ուրեմն վաղը կու գաս մեզի:

Վահրամ — Կու գամ:

Մարի — Բայց կանո՛ւթ:

Վահրամ — Կանո՛ւխ :

Մարի — Դէ՛, ցտեսութի՛ւն : (Երկու ձեռքը կուտա տղուն ու յամոռ կը նայի անոր աչքերուն) : Վայ, առ ի՛նչ ապուշ զգացում է մէջս. այնպէս սիրտս կը ճմլէ. կարծես ալ երբէ՛ք չեմ տեսնելու քեզի :

Վահրամ — (Փոխնիփոխը համբուրելով անոր երկու ձեռքերը) : Ախ, դո՛ւն, իմ անգի՛նս, հանգստացիր, ինչպէ՛ս թէ՛ չես տեսնելու : Կու գամ վաղը առտու կանո՛ւխ, կ'իջնենք նորէն ծովուն ա'փը, ձեր այն թա՛ւ պուրակին ետեւը, կը փուխիք նորէն ժայռին կողքը, աւաղին վրա ու կը սաւառնինք նորէն վն՛ր, դէպի այն աշխարհները, ուր մոռացումն է ամեն հողեղէնի, ուր ձուլումն է հոգիներու, ձո՛ւլում բնութեան այն մե՛ծ հոգիին հետ, որուն մէկ կտորն ալ մենք ենք : Եղա՛ւ :

Մարի — (Զարթ ու յափշտակած) : Եկո՛ւր, եկո՛ւր, միայն կանո՛ւխ, կանո՛ւխ : (Արագ կը նետուի տղուն վեզը, կը համբուրեն ու դուրս) :

6.

Վահրամ — (Աշխոյժ կ'երթեհէ քիչ մը սենեակին մէջ. վերջը կ'երթա, զարթ ու լի շարժումով մը կը բռնա թափով կից սենեակին դուռը) : Բարե՛, Դաւի՛թ :

Դաւիթ — (Հասուն տարիքի լայն մարդ մը. լայն մորուքով, լայն գլխարկով : Սեմին վրայէն) : Ըսին՝ հիւր ունէ՛լի՛ր. գնա՛ց :

Մարիկեան — (Կը մտնէ Դաւիթի ետեւէն, լուռ կը կենա հեռուն և տխուր ու ուշադիր կը հետևի շարունակ Վահրամին) :

Վահրամ — Այո՛ : Նոր լո՛ւր :

Դաւիթ — (Հոտ քաշելով սենեակին մէջ), Հոստեղ ինչո՛ր կրնա կան հոտ կա : (Երծաղելով մատը թափ կուտա Վահրամի

դրո) : Է՛յ, մեր աղա՛ : Խելո՛ք ես, աղբա՛ր, խելօքը դուն ես. հաճելին օգտակարին հետ : Պէտք է քիչ մը բարեխառնութիւն :

Վահրամ — (Դժգոհ ու հրամայական) : Թող յիմարութիւնները :

Դաւիթ — Ուրիշ խօսքով՝ գործդ խանգարեցի : Կը ներե՛ս, սիրելիս, կը ցաւիմ, բայց...

Վահրամ — (Նեղսիրտ) : Քեզի բան կը հարցնեմ. նոր լուր չկա՞ :

Դաւիթ — Ի՛նչպէս չէ : Որ չըլլար՝ ինչո՞ւ էի այս կրակ թափւող կէս-օրին ճամբա եղնու գալու : Ամենէն առաջ ուրախը ըսեմ. ո՛չ Յակոբն է բռնւած, ո՛չ Միշասը. ձերբակալւածները բոլորովին երկրորդական մարդիկ են :

Վահրամ — (Անզուսպ բերկրանքով), Ի՛նչ կ'ըսես : Վա՛յ, կարծես սրտէս քար մը ինկաւ : Ի՛նչ ուրախ եմ, ի՛նչ ուրախ եմ :

Դաւիթ — Հապա՛. իդուր տեղը չէր որ քեֆդ խանգարեցի :

Վահրամ — (Քիչ մը արշաւարդով), Ուրեմն... ուրեմն իմ երթալուս արգելք չկա այլևս : (Մտածկոտ), Ուրեմն ճամբան բայց է. ուրեմն...

Դաւիթ — Հա՛, հա՛. ալ ի՛նչ ուրեմն-ուրեմն : (Սարկեհա-նին), Ուրախութենէն լեզուն կապեցաւ : Չգիտեմ, ի՛նչ կա ուրախանալու : Դուն ալ կ'երթաս, մի՛ վախնար, դուն ալ կ'երթաս ու կը դառնաս էշ-նա-հատակ մը : Դո՛ւն ալ, մենք ալ, բոլո՛րս ալ, դեռ չատ ճենճ է պէտք այդ կրակին : Ա՛ռ, նայէ՛ : (Ծոցէն նստակ մը հանելով կը նետէ անոր առջեւ սեղանին) :

Վահրամ — Իսկոյն կը վերցնէ ու կը բռնա :

Դաւիթ — (Մինչ Վահրամ կը կաքդա), Ես քեզի միայն ուրախ

ըւր աւի. տխուրները հող են, դէզերով. ինքդ  
կարգա, ես սիրա չունիմ: (Քիչ մը լուռ): Դէ՛շ է,  
դէ՛շ: Ծշմարիտ չգիտեմ, ասոր ծայրը ո՛ւր պիտի եր-  
թա: Յուսահատելու բան է: Երբեմն կը մտածեմ՝  
անմիա բան է բրածնիս. միւսնոյն է, ելք չկա:

Վահրամ — (Յանկարծ ընթերցումը ընդհատելով) Ե՛լք. կ'ը-  
սես՝ ելք չկա՞: (Նստակը ցոյց տալով): Ուրեմն թող-  
նենք այսպէ՛ս, թողնենք: Բայց կեանք է ասիկա,  
ապրի՛լ է ասիկա, առանկ ապրի՛լ կ'ըլլա: (Կտրուկ)  
Ո՛չ, ո՛չ, հազա՛ր անգամ ոչ. կամ տա՛կը, կամ վրան:

Դաւիթ — (Տխուր): Դեռ կարգա՛, դեռ կարգա՛:

Վահրամ — Է՛, ի՛նչ կարգամ: (Նստակը կը նետէ սեղանին)՝  
Նո՞ր պիտի կարգամ. ի՛նչ պիտի գրէ, որ նոր ըլ-  
լա: (Քիչ մը լուռ ու վերջը հանդիստ թռնով մը) Ե՛րբ է  
Տրապիզոն մեկնող առաջին շոգենաւը:

Դաւիթ — Այսօր ի՛նչ է, Երեքշաբթի՛: Ուրեմն վաղը  
չէ միւս իրիկո՛ւնը:

Վահրամ — (Մտածկոտ) Ըսեկ է դեռ երկու օր: Նախ  
պէտք է որ Սարգիսը տեսնեմ, Գնելու բաներ աչ  
կան: Հա՛, պիտի գնամ և կղզի. վերջն ալ... Հա-  
զի՛ւ, հազի՛ւ, երկու օրը հազիւ: Բայց ինչ որ է,  
պէտք է հասնիմ: Լսէ՛. վաղը հաւաքելի՛նք վերջին  
անգամ մը:

Դաւիթ — Հաւաքելի՛նք:

Վահրամ — Կէս-օրէն առա՛ջ:

Դաւիթ — Կէս-օրէն առա՛ջ:

Վահրամ — Քու մօտդ:

Դաւիթ — Իմ մօտս:

Վահրամ — Դուն կը կարգադրես:

Դաւիթ — Ես կը կարգադրեմ:

Վահրամ — (Դուռը մտնանիւ) Դէ՛, երթաւ-բարո՛վ:

Դաւիթ — (Ինծադելով) Վա՛, տեսէ՛ն, թող մէջ մը  
խօսինք:

Վահրամ — Թօսելու բան չկա:

Դաւիթ — (Ստրկեանին) Որ բռնկեցաւ՝ պրծաւ:

Վահրամ — Գնա՛, գնա՛. մտածելու, կարգի բերելու  
բաներ շատ կան գլխուս մէջ, թողէ՛ք ինծի առան-  
ձին. պէտք ունիմ վայրկեան մը ինքս ինծի հետ  
մնալու:

Դաւիթ — Աղէ՛կ. մնացի՛ր: (Ստրկեանին առջևէն անցնելու  
տեսն) Մե՛ծ բանի վրա է. յիմա՛ր ենք մենք ա-  
մենքս ալ: (Դուրս):

7.

Վահրամ — (Կեցած է ձեռքերը ետէն յծնած սեղանին, աչ-  
քերը գետին, անշարժ ու մտաուղղ):

Ստրկեան — (Կամոց մը կը մտննա, կը կենա դիմացը, մեղմ):  
Ուրեմն վաղը չէ, միւս իրիկո՛ւն: Վճուռած է, և  
այդպէս դիւրին:

Վահրամ — Դիւրին, կը կարծե՞ս: Այո՛, երբե՛մն, ասկէ  
քանի մը չաբաթ առաջ, ատիկա շա՛տ էր գիւրին,  
ի՛նչ էր որ կիանքը ինծի համար. ըլլալ թէ ոչ՝ նո՞յնը  
չէր. ի՛նչ էի կորցնելու: Բայց հիմա գին ունի կեան-  
քըս, հիմա իմ արեւս արժէք ունի ինծի համար: Եւ  
վերջապէս այդ աղջիկը, այդ բիւրեղ հոգին: Ես  
չա՛տ լաւ գիտեմ, որ վայրի, որ անսիրտ բան է իմ  
ըրածս. բայց ուրիշ ի՛նչ կրնամ ընել:

Ստրկեան — (Տեսուկ մը ծածմեկով): Ինծի լսէ՛, Վահրամ.  
Դուն... դուն հիմա պէ՛տք չէ որ երթաս... լա՛ւ  
չէ որ երթաս: (Պարզ ու կտրուկ): Դուն դեռ չե՛ս  
երթար:

Վահրամ — Բայց ի՞նքե՞ղ ալ գիտես, չէ՞, թէ ի՞նչ աստիճան կարիք կա մարդու:

Սարկիսեան — Անշո՛ւշա:

Վահրամ — Ուրե՞մն:

Սարկիսեան — Գործը չի մնար, անհոգ եղիր: Լսէ՛: Բազդը ինծի չէ տւեր ոչինչ և ես չունիմ ոչինչ կորցրելու: Այսօր չէ, վաղը, գալու էի ե՛ս ալ քու ետե՛ղ: Վաղը ժողովին կերպ մը կը յարմարցնենք և հիմա ե՛ս կ'երթամ քու տեղդ: Վերջապէս միե՛նո՞յնն է, չէ՞: Գուցէ բոլորովին քեզի փոխանակել չկրնամ, բայց կ'ընեմ ինչ որ կրնամ: Իսկ դուն դեռ ապրէ՛ քիչ մը քու բաղդդ, ապրէ՛ քեզի համար, (կոտակով) ապրէ՛ քիչ մըն ալ ինծի համար. վերջը... վերջը օր մըն ալ, երևի, դուն կու գաս իմ փոխարէնը ու կ'ըլլանք սէր:

Վահրամ — (Հանգիստ): Այսպէ՞ս ուրեմն: Վա՛տ չէ, հիւսնալի: Իհարկէ՛, դուն անձնէր ու ազնիւ զինւոր մըն ես, անասան քու պաշտօնիդ գլխուն, իսկ ես մա՛նր հոգի մը, անձնական վայելքներուս ետե՛ն ինկած:

Սարկիսեան — (Վրդովւած) Վա՛հրամ:

Վահրամ — Ո՛չ, ո՛չ, դեռ մի՛ պարծենար սրտիդ խորքը. ես քու կարծածդ չե՛մ:

Սարկիսեան — Վահրա՛մ, ամօ՛թ է, ինչե՛ր կը խօսիս:

Վահրամ — Գուցէ՛, չգիտեմ, բայց քու ըսածիդ անմիջական պատասխանն էր, որ տւի: Այդ տեսակի... քնքուշ սոռաջարկութիւններ ամեն մարդու կարելի չէ ընել, նոյնիսկ ամենաազնիւ դիտումներով: (Խօստ) Ինչ որ քարոզեր եմ ուրիշներուն, նոյնը և ինծի. երկու չափ չի՛ պիտի ըլլա գողափարի գործին մէջ. երթալս պէ՛տք է, ուրեմն պէտք է երթամ:

Սարկիսեան — Ես միայն քեզի թեթեւութիւն տալ ուղեցի. կա՛ն բացառիկ վայրկեաններ:

Վահրամ — Բացառիկ ոչինչ չկա, բացառիկ ոչինչ չի պիտի ըլլա: Ճիշտ է, մինչև հիմա աւելի դիւրին էր ինծի համար այդ քայլը, բայց ատոր արժէքն ալ շա՛տ աւելի քիչ էր: Կայէնի նւէրն էր ատիկա, չոփ-չոր գլուխ մը, անպէտք ամենուն, անպէտք և իրեն: (Ձերմ) Հիմա ուրիշ է, հոգիին հոգի կը բերեմ ես հիմա նւէր. զոյգ մը բուռնկած հոգի մեր ժողովուրդի հոգեկան բուռնկումին, զոյգ մը թա՛րմ հոգի ապագայի աւելի արեւոտ օրերուն: Մէ՛կ նւէր մը ու երկո՛ւ սիրտ, կեանքո՛վ-սիրո՛վ դողդոջուն, երջանկութեան անուրջներով թըփուտուն... Թող քաղցրանա՛ քիմքը ազատութեան մոլորիս: (Թափով կը վերցնէ գլխարկը): Այո՛, վաղը չէ, միւս իրիկուն: (Դէպի դուրս):



ԶՈՐԻՈՐԴ ԱՐԱՐ

Թեքեւ շինւած պաւիյեօն մը:

Ճակատը երկփեղկ լայն դուռ՝ անմիջապէս պարտեզի վրայ: Սենեակը անկարգ. ճօն ու ձիգ արձուներ, սեղան ու եռոտանիներ. եռոտանիներուն վրա բաց լաթով պատած կաներ: Ամեն կողմ՝ արձուներուն, գետնին ու սեղաններուն՝ թափւած են ոլորած թղթեր, զրբեր ու նկարներ: Հոս ու հոն մեկ երկու արձան ու պատկեր:

Դուրսը սաստիկ հով է: Ծառերուն նիւղերը կ'օրօբւին ու կը փսին դռան եզերքին: Հեռուէն ծովուն շառաչը խուլ ու միապաղաղ: Մուրք է:

1.

(Նստիս քիչ մը ատեն մարդ չկա: Կը մտնեն միասին Երւանդ ու Վահրամ:)

**Երւանդ** — Ահա՛ և իմ ճգնարանս: Քեզի համար ասկէ աւելի առանձին տեղ չեմ կրնար գտներ, Կեցի՛ր մոմս վառեմ: (Կը վառէ սեղանին վրայի մոմերը): Կը հաւնի՞ս:

**Վահրամ** — (Արագ շուրջը տկնարկ մը նետելով) : Հիանալի՛, հիանալի՛. ճիշտ որ ճգնարան:

**Երւանդ** — Այո՛: Երբ դուրսի աշխարհքի ունայնու-թիւնը ինծի կը տաղտկացնէ, կու գամ կը քաշուիմ՝

իմ այս պաւլիսեօնիս չորս պատերուն մէջը և հայ-  
եացքս յառած հո՛ն, ծովո՛ւն ու այս ծառերուն՝ կը  
թաղւիմ մտածումներուս ու իմ ներքին աշխարհքիս  
մէջ: Կը մտածեմ ու կ'աշխատիմ: Մարդ ինքն իր  
մէջ, ինքն իր ներքին, իր սիրած, իր շինած, իր  
ուզած աշխարհքին մէջն է, որ կրնա միայն գո՛հ  
ըլլար: Թէ չէ դուրսի աշխարհքը և ո՛չ մէկ բան իր  
տեղը չէ դրած. ամեն բան հակասական ու անմիտ:  
Դէ՛, նստէ՛. ինչքան ուրախ եմ, որ եկար. նստի՛նք,  
խօսի՛նք, յիշենք անցեալը, մեր ուսանողական  
խենթ օրերը:

**Վահրամ** — Երեւակայէ՛, որ այսօր քիչ մը դժւար  
հարց է ատիկա. ևս փոքրիկ խնդիրքով մըն եմ ե-  
կեր քեզի:

**Եւանդ** — (Երծաղով): Հասկցա՛, հասկցա՛: (Կատակով):  
Բայց առջւերէ՛ ըսեմ որ չունիմ:

**Վահրամ** — Ի՞նչ:

**Եւանդ** — (Թուքն ու ցուցամոտը իրար քսելով): Մի՛ վախ-  
նար, կը ճարեմ:

**Վահրամ** — (Ժպտուն): Չէ՛ անհոգ եղիր. այս անգամ  
խնդրածս պարտք չէ: Կամ եթէ... կ'ուզես, այո՛,  
բայց քիչ մը ուրիշ տեսակի:

**Եւանդ** — Խրթին կը խօսիս:

**Վահրամ** — Չէ՛ր կրնար, ա՛յսպէս, կէս ժաման մը չափ  
քու այս ցեխանոցդ ինծի փոխ տայիր:

**Եւանդ** — (Զարմանքով): Աշխատանքո՛ցն: Խնդրե՛մ, խնդ-  
րե՛մ, եթէ քեզի որ և է բանի մը պէտքի դալ կրնա:  
Ամբողջովին, իր եղած-չեղածով, բոլորը քու տրա-  
մադրութեան տակ:

**Վահրամ** — Այո՞: Ծնորհակալ եմ: Ան ատեն կը խնդրէի  
որ իմաց տայիր օրիորդ Հարենցին, որ ես հոս եմ.  
և խնդրե՛մ, ինչքան կարելի է շուտ:

**Եւանդ** — (Ապշած): Վա՛յ. այսպէս ըսւած... Ժամադ-  
րութիւն մը. դո՞ւն... (Աչքերը շփելով): Վահրա՛մ,  
ասիկա դո՞ւն ես:

**Վահրամ** — Գնա՛, գնա՛, առաջ իմաց տուր, ետքը կը  
զարմանաս:

**Եւանդ** — (Սաստիկ զւարճանալով): Մեր Վահրամն ու սի-  
րային ժամադրութիւն. սքանչելի է, սքանչելի:  
Նա՛, ալ աշխարհքիս երեսին անկարելի բան չկա:  
Չէ՛, աղբա՛ր, մեր Պօլի օդը վրադ եկեր է: Ա՛յս  
վայրկեանիս (հ'երթա կը կոխէ դանդին կոճակը): Եւ ինչ-  
պէս կը տեսնեմ ճաշակդ ալ տեղն է: Տեսէ՛ք, է՛,  
ո՛ր տեղերն է կտուցը մեկներ. Հարենցին աղջի՛կը:  
(Կը նստի սեղանին առջեւ ու երկու տող խճճեկով): Ոչի՛նչ,  
ոչի՛նչ. պուաւօ՛:

2.

**Փարիամ** — (Տասնհինգ-տասնըվեց տարեկան նիհար ու թուխ  
աղջիկ մը, հայեացքը միշտ գետին, ձեռքերը դոգնոցին: Կը  
մտնէ ու դռան քովը կը կենա):

**Եւանդ** — (Վեր ցատկելով նամակը կը դնէ աղջկան ձեռքը):  
Ա՛ռ աս նամակը, կը տանիս դիմաց ու ինքդ քու  
ձեռքովդ կը յանձնես օրիորդ Մարին: Հասկըցա՞ր:

**Փարիամ** — (Գլխով կ'ընէ):

**Եւանդ** — Բայց չո՛ւտ, հիմա՛, անմիջապէ՛ս: Հասկա՛,  
քեզի տեսնեմ:

**Փարիամ** — (Կ'ըշտապէ՛ դուրս):

3.

**Վահրամ** — Ի՞նչ աղջիկ է ասիկա:

**Եւանդ** — Խեղճ որբ մըն է: Հաղիւ է աղատւեր վերջին  
կոտորածէն:

Վահրամ — Ո՛ր կողմերէն:

Եւանդ — Հաստատ չգիտեմ. կարծեմ Տրապիզոնի մօտերէն: Զէ՛ որ մենք ալ ան կողմերէն ենք մօրս գծով: Տիպիկ դէմք է, չէ՞:

Վահրամ — (Տիտուր) Այո՛, չա՛տ:

Եւանդ — Կեանքը դրեր է իր կնիքը: Ա՛յ, նայէ՛: (Կը վերցընէ եռոտանիի մը վրայի ծեփին երեւոյն թաց լաթը ու կը մօտեցընէ մօմը): Կը հաւնի՞ս:

Վահրամ — Վա՛յ, քանդակե՞ր ես: Յաջո՛ղ է, չա՛տ յաջող:

Եւանդ — Հապա ի՛նչ ընէի. մէյ մը, որ չա՛տ տիպիկ էր, իսկոյն աչքս խածաւ. մէյ մըն ալ, որ որքն ու խեղճը moderne ապրանք է հիմա, կը քչւի: (Մոմը սեղանին դնելով): Վա՛, սա ի՛նչ սոսկալի փոթորիկ է՝ վա՛յ, թէ չեկաւ, մե՛ր տղա:

Վահրամ — Ո՛վ:

Եւանդ — Ո՛վ պիտի ըլլայ. Մարի՛ն:

Վահրամ — (Պարզ) Կու գա՛:

Եւանդ — (Կը նայի ու կը խնդա) Ուրեմն... ուրեմն արդէն ձուկը ուռկանիդ մէջն է: Բարի յաջողո՛ւմ: Ոչի՛նչ. գուցէ քիչ մը քարբիզ ընէ, քիչ մըն ալ տարօրինակութիւն, բայց en somme, ոչի՛նչ, գէշ աղջիկ չէ՛: Իսկ տանեցի՞ք, բան գիտե՞ն:

Վահրամ — (Անտարբեր ուսը կը ցընցէ):

Եւանդ — Պա՛հ, կ'երեւակայեմ Հարենցի կատաղած դէմքը: (Ուրախութենէն ծափ կու տա): Սքանչելի բան է դուրս գալու. վաղը երթամ քիչիկ մը վէրքը քրքրեմ, տեսնեմ պոռա պիտի: (Քիչ մը լուռ): Ուրեմն ալ կը դառնաս Պօլսեցի, տուն տեղ. երեւի տաճնեակ հազար մըն ալ կը փրցընես. աղքատը չա՛տ է աքլոբանալու, բայց մայրը կակուղ է՝ կուտայ: Եւ... և մնաս-բարո՛վ երկիր-մերկիր, ժողովուրդ-մոլորվուրդ

և որ բոտ կարգին: (Մտերմօրէն անոր ուսին դարնելով): Ե՛, կեանքն իր ճամբան ունի, տղա՛ս:

Վահրամ — (Լուռ ու շեշտ կը նայի անոր):

Եւանդ — Հապա՛. երազը որքան ալ սիրուն ըլլա ու աստուածներէն դրկած, երա՛զ է նորէն. ուշ կամ կանուխ արթննանք պիտի: Ե՛, հոգի՛ս, հողէ ենք չինւած ու կապւած հողին: (Սիրտ տալու ու մտիթալելու շեշտով մը): Դուն առաջինը չե՛ս, ո՛չ ալ վերջինը: (Յանկարծ խօսածքը փոխելով): Բայց քիչ մը աւելի դրական խօսինք. հիմա ի՞նչ է քու միտքդ:

Վահրամ — (Կարծես արթննալով) Ինչպէ՞ս:

Եւանդ — Երեւի, նոր ծրագիր մը, բան մը կ'ունենաս: Հիմա ի՛նչ ընել ես մտադիր:

Վահրամ — (Մտամոլոր): Ինչ ընել եմ մտադիր:

Եւանդ — Հա՛, հա՛:

Վահրամ — (Ուսը կը ցընցէ):

Եւանդ — (Խնդալով): Այսինքն: Շա՛տ բան չհասկցաքու ուսէդ:

4.

Մարիամ — (Կը մօնէ ու կը կենա դռան մէջ):

Եւանդ — Նա՞, տե՛ր:

Մարիամ — (Գլխով կ'ընէ):

Եւանդ — Կարդա՞ց:

Մարիամ — (Գլխով կ'ընէ):

Եւանդ — Բան չըսա՞ւ:

Մարիամ — (Գլխով բացասական):

Եւանդ — Աղէ՛կ. գնա՛:

Մարիամ — (Կ'ուղղուի դէպի դուռ):

Վահրամ — Աղջի՛, կեցի՛ր: (Կ'երթա ու առանց սլակալու-

49

Թեան կը բռնէ անոր ծնօտը ու դէմքը կը բարձրացնէ վեր, դէպի լոյսը: Ինչ է քու անունդ: Ինչ. Մարիամ: Աս երբ էր, որ ձեր գիւղը կոխեցին: Առաջ իհարկէ մարթեցին հայրդ, եղբայրներդ, քար ու քանդ բրին առն ու սեղդ, ունիմ-չունիմդ, քչեցին աարին քոյր ու հարսներդ, չէ: Մնաց մայրդ, ան ալ չոր-ցաւ, չորցաւ, մինչեւ հատաւ ու վերջացաւ:

Մարիամ — (Կ'ըսկսի հեծկլտալու՝ ձայնը խեղդել ջոնալով),

Վահրամ — Աղէ՛կ, աղէ՛կ, բան չկա. սուրբակա՛ն պատ-մութիւն:

Եւանդ — Ինչո՞ւ կը տանջես խեղճը: Թո՛ղ որ երթա:

Վահրամ — (Առանց անոր խօսքերուն ուշ դարձնելու), Մի՛ լար, աղջի՛կ, լալու բան չկա:

Եւանդ — Թող լա, մնաս չունի: (Թեթեւ մը աղջկան թեւէն հրելով) Գնա՛, գնա՛:

Մարիամ — (Դուրս):

5.

Եւանդ — Թող լա, մնաս չունի. կը թեթեւանա:

Վահրամ — (Վայրի խնդուքով) Թեթեւանա՛, լա՛ որ թեթեւանա. ինչ չուայութիւն. լա՛ որ թեթեւանա... Իսկոյն կ'երեւա, որ սարսափելի քնքռւչ սիրտ ունիս, է՛: (Յանկարծ լուրջ ու բարկացած) Ո՛չ, յիմա՛ր, ո՛չ, ատիկա լալով չի թեթեւանար, ո՛չ լալով, ո՛չ ալ քանդակելով. ատիկա քու գիտցած ցաւերդ չէ՛: Ո՛չ թէ լալ, սլլ... (Խօսքը կ'ընդհատէ Մարիի ներս մտնելը տեսնելով):

6.

Մարի — (Կը մտնէ արագ, երկար անձրեւնոցի մը մէջ տմ-

բողջովին փաթթւած: Մազերը հովէն թափւած են ճակտին ու ինքն ալ շնչատ):

Եւանդ — Ա՛հ, օրիս՛րդ Մարի: Խնդրե՛մ: (Անձրեւնոցը աղջկա ուսէն առնելով):

(Մարի ու Վահրամ հարցական ու տեսակ մը յարձակողա-կան կեցած են իրարու դէմ ու կը նային իրար):

Եւանդ — (Վահրամին) Եթէ ինծի պէտք ունենաս՝ սեղմէ՛ կոճակը: (Դուրս):

7.

Մարի — Առտուն չեկա՛ր:

Վահրամ — Եկա՛ր, եկա՛ր նստէ: Գիտե՞ս... Ինչպէ՞ս բան, որ քեզի համար պարզ ըլլա... Արդէն դուն... դուն... է, ինչքան կարճ, այնքան լաւ: Մարի՛, վաղը այս ժամանակ պիտի ըլլա՞ չորեկանաին վրա, դէպի Տրապիզոն:

Մարի — (Կեցած է անշարժ ու անքթիթ):

Վահրամ — Ես արդէն քեզի ըսեր էի: Չէ՞, դուն գիտէիր, որ ատիկա պատահելու էր. եղաւ իմ կարծածէս քիչ մը աւելի կանուխ: (Քիչ մը լուռ): Դուն գիտե՞ս, չէ՞, թէ ես որքան... Դուն կը հասկընա՞ս, չէ՞, հիմա իմ դրութիւնս: (Քիչ մը լուռ): Ինչո՞ւ ես լուր, չիսալ՞ս:

Մարի — (Հանդարտ վերցնելով անձրեւնոցը աթոռէն), Եր-թաս բարո՛ւ, բարեկամս, բարի ճամբա՛: (Կ'ուղղւի դէպի դուրս):

Վահրամ — Մարի՛, Մարի՛:

Մարի — Դեռ ըսելի՞ք ունիս:

Վահրամ — Թո՛ղ, Մարի՛, թող այդ սառնութիւնը, թո՛ղ այդ կեղծիքը: Մ'օտ եկուր, խօսէ՛:

Մարի — Ինչ կ'ուզես, որ ես խօսիմ քեզի, երբ դուն

ինքդ ամեն բան վճռեր ես ու կարգադրեր: (Ծաղրով)  
Վաղը այս ատեն կ'ըլլաս շոգենաւին վրայ, դէպի  
Տրապիզոն: Երթա՛ս-բարով, ուրիշ ի՞նչ կրնամ  
ըսեր: Ես ո՞վ եմ որ, ես ինչացո՞ւ եմ որ. քեզի հա-  
մար ի՞նչ նշանակութիւն ունի իմ գոյութիւնս, ի՞նչ  
արժէք:

Վահրամ — Մարի՛:

Մարի — Է՛, ձգէ՛, հոգիդ սիրես:

Վահրամ — Ես վճռեր եմ, ինչ որ պարտական էի վրձ-  
ուելու. ուրիշ կերպ վարել չէի կրնար:

Մարի — (Չարացած): Է՛, պարտական, պարտական, մի-  
այն երբ խօսքը ուրիշներուն համար է: (Անձրեւնոցը  
նորէն աթոռին նետելով): Իսկ ինծի՞, ինծի պարտա-  
կան չե՛ս:

Վահրամ — Դու՛ն, սիրելի՛ս... աս ուրիշ բան է:

Մարի — (Հետզհետէ տաքնալով): Ես կ'ապրէի ինծի հա-  
մար, գոհ թէ դժգոհ, իմի՛ններուս հետ, ես ալ  
անոնցմէ մէկն էի. դուն եկար շուռ տուիր մէջս  
ամեն բան. նոր կեանքի յոյսեր, նոր շարժում, նոր  
յոյգեր: Ես հիմա օտար մըն եմ իմի՛ններուս մէջ,  
խորթ ու կտրւած իմ տանս մէջ: Մինա՛կ, մինա՛կ,  
երբ դուն քօլս չես, մինա՛կ բոլորովին, երբ քու  
չունչդ չի շոյեր ինծի: Եւ ահա՛ կ'ըսես, որ ձգես  
պիտի ու երթաս, (ծաղրով) որ վաղը այս ատեն կ'ըլ-  
լաս շոգենաւին վրայ, դէպի Տրապիզոն:

Վահրամ — Ա՛յ, եկեր եմ, որ խօսինք, կարգադրինք:  
(Մօտենալով կը բռնէ ձեռքը): Ըսէ՛, ընե՛մ, ինչ որ  
կրնամ:

Մարի — (Յուսահատ գլուխը օրօրելով): Խօսելու ոչինչ չկա,  
կարգադրելու ալ ոչինչ չկայ. ես գիտեմ քեզի.  
վճռեր ես ու պիտի երթաս. պիտի երթաս ու մեռնիս:

Վահրամ — Չէ՛. ինչո՞ւ. այդպէս ալ սեւ մի՛ տեսներ:

Մարի — Է՛, ձգէ՛, սակը քու արեւստը չէ. դուն ինքդ  
ես ըսեր՝ «գնացողին դարձ չկա»:

Վահրամ — (Ուսերը ցնցելով): Ո՞վ գիտէ. բա՛ղդ:

Մարի — (Իիջ մը ատեն կը նայի անոր շեշտ ու լուռ և յանկարծ  
լալով կը փաթթւի վեզը): Մի՛ երթար, մի՛ երթար:  
Ես չեմ կրնար ապրիւր առանց քեզի, չեմ կրնար,  
հոգի՛ս, կեանքս: Եկո՛ւր, եկո՛ւր լսէ՛ ինծի: (Աւելի  
ամուր սեղմելով աղուն, կը քաշէ բաղմոցին վրայ): Ես  
տամ քեզի բոլորը, ինչ որ ունիմ, բոլորը ինչ որ  
կրնամ ունենար, ա՛ռ, տա՛ր, տո՛ւր ընկերներուդ,  
թո՛ղ տանին, թո՛ղ ուղարկեն. մի՛թէ ատիկա գործ  
չէ՞: Մի՛թէ ատիկա հերիք չէ՞: Բայց դուն մի՛ եր-  
թար, դուն մնացի՛ր հոս, մնացի՛ր մօտս. մնացի՛ր  
ինծի համար, քու Մարիիդ համար:

Վահրամ — (Թաղելով դէմքը անոր թեւերուն մէջ): Ա՛խ, իմ  
խնձ Մարիս, իմ բաղդս, իմ դժբաղդս:

Մարի — Մե՛ղք է, չէ՞, մեղք է քու Մարիդ: Միայն  
քեզի ունի աշխարհիս երեսին, միայն քեզի՛, քեզի՛.  
չե՛ս թողներ անիկա, Վահրա՛մ, չե՛ս թողներ անի-  
կա երեսի վրա:

Վահրամ — (Կոտորած): Ա՛խ, չգիտե՛մ, չգիտե՛մ...

Մարի — (Սիրտ առած): Կ'ապրինք միասին, կ'աշխատինք  
միասին, կ'ընենք բոլորը, ինչ որ կրնանք, ինչ որ  
մեր ձեռքէն կուգա: Չե՛ս երթար, չէ՞, Վահրա՛մ:  
(Ամուր գալարելով): Իմ արեւս ես դուն, դուն իմ  
չո՛ւնչս ես, առանց քեզի լո՛յս չկա, օ՛ղ չկա առանց  
քիզի. կե՛անքս ես դուն, կե՛անք, կե՛անք...

Վահրամ — (Յանկարծ կ'ուղղւի ընդոտտ ու դեռ աղջկա թեւե-  
րուն մէջ, ահանջ կը գնէ դէպի դուռս, ուր փոթորեկը աւելի  
է ստտկացած, հովը կոտորի ու մերթ ընդ մերթ փայլակ):  
Իսկ հո՞ն... Իսկ հո՞ն... Սը՛ս. լսէ՛, լսէ՛. չե՛ս  
լսեր, Մարիամն է որ կուլա:

**Մարի** — (Աղշած): Ինչ Մարիամ, խենթ ես, հովն էր, վաղեց տերեւներուն մէջէն:

**Վահրամ** — (Աղջկա գերկէն ետ-ետ քաշւելով): Մարիամը, Մարիամը, բոյժ՝ Մարիամները: Այ, գիւղը, որ կ'այրի, ամբողջ գիւղը. ա՛յ, հայրը, եղբայրը: Նայէ՛ գիւղե՛րը, գիւղե՛րը, բոցերը:

**Մարի** — (Վախցած): Ինչե՛ր կը խօսիս, Վահրամ. Ինչ բոց, ինչ բան, աչքիդ կ'երևա. փախա՛ն էր որ անցաւ:

**Վահրամ** — Հապա այդ թռչունները, որ կը կանչեն, կը կանչեն դաւով ու տանջանքով, կը կանչեն բոցերուն մէջէն, կը կանչեն կիրճերուն մէջէն, կը կանչեն ճամբա ցոյց տալու, կը կանչեն կուրծքը դէմ տալու. ամբողջ գիւղե՛ր, գիւղե՛ր, ամենքը մէ՛կ բերան, ամենքը մէ՛կ ձայնով... Չե՞ս լսեր, ակա՛նջ դիր:

**Մարի** — (Ինքը ստրտափաճար ու աշխատելով որ համբաւացնէ): Ատիկա ծո՛ղն է, հողի՛ս, ծո՛ղն է կառուցեր ու կը մռնչէ:

**Վահրամ** — (Ոտքի կը ցատկէ տեսակ մը յողթական): Այո՛. ատիկա ծո՛ղն է կառուցեր ու կը մռնչէ, ատիկա ծո՛ղն է ցա՛ւի ու տառապանքի, որ կառուցեր է վերջնապէս, որ կառուցեր է ու կը մռնչէ: Ա՛տ է ճամբան, ժողովուրդի մը բարձրացման, ժողովուրդի մը ազատման միակ ճամբան: (Մեղմոցած) 'Իէ՛, Մարի՛, տո՛ւր ինծի վերջին համբոյր մէն ալ ու միասնաբարով: (Դիտարկը եղանէն վերցնելով): Ամեն մարդ իր ճամբան:

**Մարի** — (Կը նետւի անոր ճամբուն վրայ, կը կենտ ձիւ ու հըստտ, ձեռքի վճռական շարժումով մը): Ես կ'արգիլեմ քեզի:

**Վահրամ** — (Աղշած): Ինչպէ՞ս:

**Մարի** — Ես կ'արգիլեմ քեզի:

**Վահրամ** — Բայց հայրենիքս է, որ կը կռնչէ:

**Մարի** — Ես կ'առնեմ քու հայրենիքդ:

**Վահրամ** — (Խիստ): Մարի՛, քու հայրենիքդ ալ է:

**Մարի** — Ի՞մ: Իմ հայրենիքս դո՛ւն ես և միայն դո՛ւն. իմ ամեն ինչս դո՛ւն ես, և միայն դո՛ւն. քեզմէ դուրս ոչինչ չկա, ոչինչ, ոչինչ:

**Վահրամ** — Թո՛ղ, Մարի՛, թո՛ղ. ես իմն չեմ:

**Մարի** — (Տերտեր): Դո՛ւն ի՛մա ես, ի՛մա, ի՛մա:

**Վահրամ** — Չգիտես՝ ինչ կը խօսիս:

**Մարի** — Կեցի՛ր: Ուրեմն վճռա՞ծ ես, վերջնապէս:

**Վահրամ** — Վճռողը ե՛ս չեմ: Վճռողը հողեպէս ինկած ժողովուրդի մը աղնւայման պահանջն է, սարուկ ու ոտքի տակ ինկած ժողովուրդի մը յուսահատ ձիգը:

**Մարի** — (Չար): Ե՛րբ պիտի մեկնիս:

**Վահրամ** — Ըսի՛ արդէն, վաղը այս ատեն կ'ըլլամ սե ծովուն վրա:

**Մարի** — Մե՛... այո՛, սե՛. Եւ ատիկա քու վերջին խօսքդ է:

**Վահրամ** — (Ուսը կը ցնցէ):

**Մարի** — Աղէ՛կ. դիտցի՛ր և ի՛մ վերջին խօսքս: Վաղը այս ատեն մեր տունը կ'ըստասեմ քեզի. Չուշանա՛ս, Վահրամ, եթէ իմ կեանքս արմէք մը ունի քեզի համար:

**Վահրամ** — (Վախցած): Մարի՛, Մարի՛, չե՛ս ըներ այդ յիմարու ի՛նչը:

**Մարի** — Ո՛չ, պէ՛տք է. կ'ըսես պէտք է, որ երթաս. ուրեմն պէտք է: Գնա՛, ես արգելք չեմ քեզի. միայն դիտցի՛ր, որ երթաս պիտի դիակիս վրայէն:

**Վահրամ** — Բայց քու ըրածդ անգութ բան է, Մարի՛,

անգութ ու աւելորդ: Խօսք տուր ինծի. ըսէ՛, ըսէ՛, որ այդ տեսակ անողոք քայլ չես ընել, Մարի՛, ըսէ՛, որ դատարկ սպառնալիք էր ատիկա:

**Մարի** — (Վերաւորեալ): Սպառնալիքը չի՛ վայելեր դէմքիս, Վահրամ, ինչպէս և քեզի՛: Լեզուս խօսելու է քեզի՛: Լեզուս խօսելու է քեզի՛ մի՛շտ և միա՛յն ճշմարտութիւնը: Պիտի գա, ինչ որ գալու է անխուսափելի, ինչ որ գրեալ է ճակտիս: (Անձրեւնոցը աթոռէն վերցնելով): Վաղը այս ժամին կ'ըստասեմ քեզի՛:

**Վահրամ** — Մարի՛...

**Մարի** — (Արցունքները դապելով): Կ'ըսես՝ ուրիշ ելք չունիս, կ'ըսես ատիկա է քու ճամբադ, քու պարտդ: Ես կը հասկընամ քեզի, և գիտե՛մ որ անուժ եմ: Գնա՛: Միայն հասկըցի՛ր, որ ես ալ ուրիշ ճամբայ չունիմ: Ես իմ հոգիս տւի քեզի, անվերադարձ, անվերապահ... Առանց հոգիիս չեմ ապրիր: (Անձրեւնոցը կը նետէ ուսերուն): Եթէ կ'ուզես ապրիմ՝ մնացի՛ր, մնացի՛ր մօտս, բայց կամքո՛վդ, բայց առանց խղճի խայթի, եթէ կրնաս: Ես արգելք չե՛մ քեզի, ես չեմ ուզեր արգելք ըլլամ քեզի: Ես չե՛մ ուզեր, որ քեզի նւաստ զգաս ինծմով, ես կ'ուզեմ որ դուն հպարտ ըլլաս ինծմով:

**Վահրամ** — Մարի՛, այդ բնուր մի՛ դնել խղճիս:

**Մարի** — Ի՞նչ բնու: (Խորհրդաւոր): Դուն ըսիր ինծի, մեռնի՛լ պիտի գիտնանք:

**Վահրամ** — (Թափով): Ո՛չ. ես այդ տեսակ մահաւան համար չըսի քեզի:

**Մարի** — (Տխուր): Ի՞նչ, ուրեմն կ'ուզես, որ հոգիս չորնա ու կծկւի. չէ՞ որ դուն կ'երթաս կծկւած հոգիները բանալու:

**Վահրամ** — (Յափշտակած ու աղաչանքով): Իմ անգին աղջիկս, իմ աղնի՛ւ աղջիկս, չէ՛, չե՛ս ընել, այդ խնթութիւնը, չե՛ս ընել:

**Մարի** — (Տխուր կը ցընցէ ուսը):

**Վահրամ** — Ո՛չ, ո՛չ, անկարելի է, անկարելի: Աւելորդ արիւն է ատիկա, բոլորովին աւելորդ...

**Մարի** — Աւելորդ է՝ արգելէ՛: Վաղը այս ատեն կ'ըստասեմ վճռիդ: (Կ'երթայ դէպի դուռը):

**Վահրամ** — (Խենթի պէս կը նետել վրան՝ բռնելու, արգելելու շարժումով մը):

**Մարի** — (Յանկարծ կը դառնա, պաշտպանելով ետ կը քաշւի դէպի դուռը ու ձեռքի խրոխտ արգելումով մը): Ո՛չ... (Վայրկեան մը քարացած կը դիտեն իրար):

**Մարի** — (Յանկարծ կը կծկւի անձրեւնոցին մէջ ու դուրս):

**Վահրամ** — (Նախ կեցած է քիչ մը ատեն անշարժ, քիչ-քիչ կը թուլնա, ձեռքերը վար կը սահին ու քիթ ու բերնին կ'ընտրազկաթռին. հեծկլտուք):  
(Դուռուէն կը լսւի հովին թափը, ծառերուն վայրի իրարանցումը ու ծովուն խուլ աղմուկը):



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱՐԱՐ

Ընդարձակ սրան մը :

ձակատը լայն ու բաց դուռ մը, որ ծովահայեաց պատշգամբ կը հանէ . դռան երկու կողմէն երկու մեծ լուսամուտ : Զախէն կողմնակի խորքի դուռը Մարիի սենեակը կը տանի, աջէն առջեւի դուռը դեպի դուրս : Թեթեւ ու հարուստ կահաւորում : Առատ կանաչ ու ծաղիկներ մեծ ու փոքր քաղարներու՝ մեջ քե՛ ցերսը եւ քե պատշգամին վրա :

Արեւը մայրը է մտած : Երկինքն ու ամպերը , պատշգամն ու ցերսը ամեն բան ողորմած է վերջալոյսի նարինջ-կարմիր պայծառ հառազայքներուն մէջ :

1 .

**Մարի** — (կեցած է ձեռքերը ետին, մէջքն ու գլուխը յենած պատշգամի դռանը եւ հայեացքը հեռուն) :

**Մայրը** — (նստած կը կարէ : Բիշ մը լուռ : Ետքը կ'ընդհատէ կարը ու կը նայի աղջկանը) է՛ , հերիք չէ՞ , աղջիկս :

**Մարի** — (Գը ցընցւել, կը նայի մօրը, շուրջը ու վերջը նորէն ծովուն) :

**Մայրը** — Մէյ մը իմանայի՛ր՝ ինչ ունիս գլխուդ մէջ : Ի՞նչ կը մտածաս ատանկ անվերջ , աղջիկս , ի՞նչ կը մըտածաս :

**Մարի** — Նայէ՛ , մայրիկ , ինչ կարմիր երկինք է :

**Մայրը** — Ատիկա՞ է մտածութիւն :

**Մարի** — Նայէ՛, մայրիկ, արիւն ըլլա կարծես :  
**Մայրը** — Հա՛ : (կարը ժողկելով) : Աղւո՛ր իրիկուն է :  
**Մարի** — Այո՛, մայրի՛կ, իրիկո՛ւն : (Մտածկոտ հեռանալով դռնէն) Այսպէս ուրեմն, եկաւ իրիկո՛ւնը :  
**Մայրը** — Ինչպէ՞ս :  
**Մարի** — Եկա՛ւ, կ'ըսեմ, իրիկունը, կարմի՛ր, արի՛ւն իրիկունը : (Տեսակ մը յոգնած շարժումով կը նստի բազկաթոռին) :  
**Մայրը** — Երբ որ տանկ կարմիր է իրիկունը, կը նշանակէ եղանակները փոխւելու են : Այ ի՞նչ երկար բարակ մտածելու բան կա հոտ : Ելի՛ր, ելի՛ր, վա՛ր եկուր, երթա՛նք քիչ մը այգին, կը բացւի՛ս :

2.

**Մուսնի** — (Կ'երևա սեմին) :  
**Մայրը** — Այ, ի՞նչ աղէկ եղաւ, որ եկաք, պարո՛ն Երւանդ : Առէ՛ք Մարին ու իջէ՛ք այգին, Եկէ՛ք ընկուզենիներուն տակը : (Դուրս) :

3.

**Մուսնի** — (Մտենալով օրիորդին) : Բարե՛ ձեզի. ի՞նչ բանի էք :  
**Մարի** — (Դուրսը կը բարձրացնէ ու լուռ կը նայի անոր) :  
**Մուսնի** — Ի՞նչ էք նստեր հոստեղ մինակ :  
**Մարի** — Ես... (Քիչ մը մտածելէն ետքը) : Կ'ըսողատեմ :  
**Մուսնի** — Կ'ըսողատե՞ք : (Ժպտուն) Որո՞ւն կամ ինչի՞ն :  
**Մարի** — Ինչի՞ն : (Քիչ մը մտածելէն ետքը) : Ոչինչի՞ն :  
**Մուսնի** — Ոչինչի՞ն : Խրթին է :

**Մարի** — (Լուրջ ու խորհրդաւոր, եր սենեակին դուռը մատնանիշ ընկելով) : Այ, տեսէ՛ք :  
**Մուսնի** — (Հայեացքը կը լարէ դէպի դուռը, վերջը ժպտուն ու հարցական կը նայի օրիորդին) :  
**Մարի** — Չէ՞ք տեսներ :  
**Մուսնի** — Ի՞նչը :  
**Մարի** — Չէ՞ք տեսներ :  
**Մուսնի** — Մո՛ւթ է հոն. երեւի ձգւած են վարագոյրները :  
**Մարի** — Չգւած են ձե՛ր վարագոյրները. երբ որ բացւին՝ կը տեսնէք :  
**Մուսնի** — (Խոլալով) : Այսօր լա՛ւ կատակի էք տրամադրւած : Մինչդեռ երեւակայեցէ՛ք, մարդիկ մնղանչաւան են, միշտ գէշ բաներ կը մտմտան... Երեւակայեցէ՛ք, ես կարծեր էի, որ դուք հիմա գրգռւած ու ջղային էիք ըլլալու, գոնէ, ա՛յնպէս, քիչ մը :  
**Մարի** — Եւ ինչո՞ւ :  
**Մուսնի** — Չէ՞, որ գնաց մեր հերոսը. մե՛ր կամ ձե՛ր, ինչպէս որ կ'ուզէք :  
**Մարի** — (Հանգիստ) : Գնա՞ց, արդէ՞ն :  
**Մուսնի** — Գոնէ երթալու էր. երէկ գիշեր միթէ ձեզի ոչինչ չըսա՞ւ :  
**Մարի** — (Հանգիստ) : Այո՛, ամեն մարդ իր ճամբան ունի երթալու :  
**Մուսնի** — Հրաշալի՛ է, հրաշալի՛ է ձեր այդ անլրդով շարժումը : Չէ՛, ես չէի սխալած : Ես իսկոյն բմբռնեցի, որ ձեզի համար, սա՛նկ սիրուն քարբիզ մըն էր ատիկա, ուրիշ ոչինչ. և բարեբա՛ղդարար : Ես տեսել չեմ կրնար այն սանդղիմենդայ տափակու թիւնը, որով երկու էակ կը փակչին իրար ու կը մնան, և ալ ուրիշ ոչինչ տեսել չեն ուզեր ո՛չ շուրջը, ո՛չ վերը, ո՛չ կեանք, ո՛չ գեղեցկութիւն : Մէկ խօսքով՝ չա՛տ նեղ բան, չա՛տ արխայիկ ու գոհիկ :

**Մարի** — (Երազկոտ)։ Այո՛. շատ արխայիկ ու գռեհիկ...

**Երևան** — Ա՛յ, ես կը հասկընամ ձեր զգացումը։ Գուցէ ինքներնիդ ալ չէք գիտակցեր, բայց ձեր հոգին *moderne* է։ Եւ ես ասիկա է՝ որ կը պաշտեմ ձեր մէջը, ձեր այդ լա՛յն, բա՛ց, գեղարուեստագէտի հոգին։ Ուր գեղեցկութիւնն է՝ հոն ալ կը հակիք. իսկ գեղեցկութիւններ չաւ եմ, չաւ ու չուտ, չուտ ու վաղանցիկ, այսօր կա, վաղը հաւատաւ։ Այսպէ՛ս, քիչ մը զայրոյթ, քիչ մը ճակատը կնճռել, վերջն ալ ձեր այս սքանչելի փիլիսոփայութիւնը. «ամեն մարդ իր ճամբան»։

**Մարի** — (լուրջ)։ Իսկ ետքը։

**Երևան** — Ինչպէ՛ս։

**Մարի** — Իսկ ե՛տքը, ե՛տքը. ի՞նչ կարծէք։

**Երևան** — (ժպտուն)։ Ե՛տքը... Ետքը նո՛ր ծագիկ ու նո՛ր մեղր։ (Խորհրդաւոր)։ Կեանքը վայելել գիւնալը ընտիր հոգիներու բաժինն է։

#### 4.

**Նեկսար** — (Կը մտնէ լուռ ու խոփոյ)։

**Հարենց** — (Մաստիկ գրգռւած)։ Ո՛հ. աս արդէն չափը անցաւ, աս արդէն... (Տեսնելով Երևանդը կանգ կ'առնէ, բայց զայրոյթը զսպելու անկարող՝ կը շարունակէ)։ Է՛, դուք տանու մարդ էք, միշտ չունի։ Գուք ըսէ՛ք գոնէ, պարո՛ն Երևանդ, դո՛ւք ըսէք։ Աս ի՛նչ խայտառակութիւն, այս ի՛նչ սկանդալ։ (Մարին) Հապա՛, հապա՛ ասանկ է երբ մարդ երես կու տայ խոհանոցի ծառաներուն։ Ըսէ՛ նայի՛մ, հիմա ինչով պիտի գոցես ուրիշներուն բերանը։ Ինկիր ենք արար աշխարհքին բերանը, կը լսե՛ս, արար-աշխարհքի։

**Մարի** — (լուռ ու հանդարտ կը նայի եղբօրը)։

**Հարենց** — Ի՛նչ կը նայիս երեսս ի վեր։ Քեզի՛ կ'ըսեմ, չե՛ս լսեր։

**Մարի** — (Մեքենաբար) Կը լսե՛մ, կը լսե՛մ, արար աշխարհքի։ (Յանկարծ կարծես սթափելով) Աշխարհքի։ Աս ո՛ր աշխարհքէն կը խօսիս ինձի։

**Հարենց** — (Նախ ապշած կը նայի քիչ մը) Քիթի՛ս. կը խընդաս։ Հոս մինակ դուռն չես, հոս մեր անունն ալ կա, հոս մեր պատիւն ալ կա։ Չէ՛, չեմ թողներ որ մեր անունը ձգես ամենուն բերանը։ Կը հասկընա՛ս՝ ինչ կ'ըսեմ։

**Մարի** — Կը հասկընա՛մ. կը հասկընամ, ինչպէ՛ս չէ... քո՛ւ անունդ... քո՛ւ անունդ...

**Հարենց** — (Բիրտ)։ Թո՛ղ այդ յիմար խօսւածքդ։ (Աւելի հանգիստ, բայց կտրուկ)։ Լսէ՛, Մարի՛, քեզի մէկ անգամ ընդմիշտ կ'ըսե՛մ, որ այդ... այդ տղան միւս անգամ հոս ոտք չդնէ՛ պիտի։ Հասկըցա՛ր։

**Մարի** — (Յանկարծ գ'ուղղւել, կը նայի պատի ժամացոյցին ու ժամացոյցը մատնանիչ ընելով, հանգիստ)։ Իսկ եթէ հիմա՛, հո՛ս, ա՛յս վայրկեանիս ներս մտնելու ըլլա՛։

**Հարենց** — Հիմա՛, հո՛ս, հո՛ս... ուրե՛մն... (Քայլ մը կը մօտենա քրոջը ու վանկերը ծանր շեշտելով)։ Ուրեմն այս բոլորին տակը բան մը կա՛։ (Կոպիտ) Ինձի նայէ՛, տեսնեմ։ Իրա՛ւ է, որ դուռն գացեր ես անոր բնակարանը։

**Մարի** — (Պարզ)։ Այո՛. յաճա՛խ։

**Նեկսար** — (Բարձր ու սուր քրքիչ մը կ'արձակէ և հպարտ ու արհամարտ կ'անցնի ու կ'ելլէ դուրս)։

**Հարենց** — (Կեցած է սարսափէն բերանը բաց, առանց գիտնալու ինչ ընելը)։

**Երևան** — (Ետ քաշւած, ժպիտ մը շրթունքին անկիւնը)։

**Մարգար** — (Հազարած ու Ֆեսով, կը մտնէ տխուր, ձեռքը ծոցը):

**Մարի** — (Տեսնելուն պէս կը սպրդնի, ետ-ետ կ'երթայ դողդոջուն, մինչև կը հասնի թիկնաթուռի մը, թիկունքէն կը բռնէ մեքենաբար, կը յենւի ու կը մնա անշարժ):

**Մարգար** — (Ծանր կու գա շետակ աղջկա վրա ու զգուշ ձեռքը ծոցէն հանելով նամակ մը կը մեկնէ անոր): **Ըսա՛ւ**, որ ասիկա ձեզի յանձնեմ:

**Մարի** — (Խեղդւած): **Ո՛ւր է ի՛նքը**:

**Մարգար** — **Ինքը... գնա՛ց**:

**Մարի** — (Ծանր առաջ կը բերէ ձեռքը ետեւէն, կ'առնէ նամակը առանց իսկ վրան նայելու, հանգիստ պատուելու կ'ըսկսի):

**Մարգար** — (Վրան նետւելով, արգիւելու շարժումով մը): **Ի՛նչ կ'ընէք, ի՛նչ կ'ընէք, օրիորդ**: **Ըսա՛ւ** չա՛տ, չա՛տ կարեւոր բան է. **ըսա՛ւ** որ անպատճա՛ւ, իսկո՛յն յանձնեմ ձեզի. **ըսա՛ւ** շտապեմ, որ չա՛տ, չա՛տ կարեւոր է:

**Մարի** — (Կը դադրեցընէ պատուել): **Ո՛ւր է ի՛նքը**:

**Մարգար** — **Ի՛նքը, ինքը ըսի գնա՛ց**: **Դրի շոգենաւ**:

**Մարի** — (Հանգիստ և կանոնաւոր շարժումով մը կը շարունակէ պատուել):

**Մարգար** — **Բայց... բայց, օրիորդ... բայց...**

**Հարենց** — (Կը մտնենա ու կը քաշէ Մարգարի թւէն): **Ինծի դարձի՛ր, նայիմ, ի՛նչ կը զրուցես**:

**Մարգար** — **Ա՛յնքան համոզեցի, որ չերթայ, աղա՛. ասանկ գէշ ժամանակներ են: Զխեց: Է՛, Աստուած հեաը**:

**Հարենց** — **Ատ ո՛վ. որո՛ւ մասին կը զրուցես**:

**Մարգար** — **Վահրա՛մը, աղա՛, քրոջս սղան**:

**Հարենց** — **Քո՛ւ... քո՛ւ... ան... է՛, ի՛նչ է եղբր**:

**Մարգար** — **Երկիր գնաց**:

**Հարենց** — **Երկիր գնա՛ց**:

**Մարգար** — **Հա՛, աղա՛. հիմա ճամբու դրի, հոնկէ կու գամ: Անոր շոգենաւը, ահագին, սպիտակ, մեր ետեւէն կու գար. շուտով հոսկէ պիտի անցնի**:

**Հարենց** — (Ապշած կը դառնա Մարիին, քիչ մը կը դիտէ ու դառնալով նորէն Մարգարին, մեղմած): **Աղէ՛կ. գնա գործիդ**:

**Մարգար** — (Դուրս):

**Հարենց** — (Ծանր ու մեղմ): **Աս ի՛նչ բան էր, Մարի, Ինչպէ՛ս հասկընամ քիչ մը առաջւան ըսածներդ**:

**Մարի** — **Ինծի հանգիստ թող**:

**Հարենց** — (Սիրաշահելով): **Աղէ՛կ, մի՛ վշտանար. գուցէ քիչ մը խիստ խօսեցա, բայց... բայց տոտանկ բա՛ն կ'ըլլա**: (Հետզհետէ զարթոնալով): **Վայրկեա՛ն մը հաւտացի բոլորովին. ի՛նչ գիտնամ, դուն անանկ տարօրինակ բաներ ունիս երբեմն. ինտո՛ր իմանայի, որ կատակ էր ընտրածդ**:

**Մարի** — **Զգէ՛ ինծի հանգիստ**:

**Հարենց** — **Աղէ՛կ, աղէ՛կ**: (Խոր շունչ մը առնելով): **Բայց ի՛նչ սկանդալ պիտի ըլլար, Աստուած իմ, եթէ իրաւ եղած ըլլար, ի՛նչ չի լուած սկանդալ: Նեկտա՛ր, Նեկտա՛ր**: (Դուրս):

**Մարի** — (Կեցած է անշարժ դեռ միշտ յենած աթոռին, այքերը անթարթ կէտի մը յառած):

**Երւանդ** — (Կամոց մը մտնելով) **Անցա՛ծ ըլլայ**:

Մարի — Թողէ՛ք, խնդրեմ, քիչ մը խնժի առանձին :

Եւանդ — Է՛, բան չունի՞ք . դարտա՛կ բան scène de famille! Կը պատահի : (Խնդալով) Բայց... խոստովանեցէ՛ք, չարացա՞ք, չէ՞, որ Վահրամը գնաց : Անշուշտ, ո՛չ ինքնին անհատը, խնդիրը հո՛ւտ չէ . բայց, սա՛նկ, կանացի դայրոյթ մը, որ անիկա կտրեց ձեր այդ սակի շղթաները, որ չմնաց :

Մարի — (Նախ լուռ ու լուրջ կը նայի անոր, վերջը սրտանց ու հպարտ) : Սանձեր ծամողը գեանէն գացողներն են . վերէն խոյացողը սանձի չի՛ գար :

Եւանդ — (Երկմիտ) : Ա՛, իհարկէ...

Մարի — (Հպարտ) Եւ ան չէ՛ր ըլլար ան, ինչ որ է՛, եթէ մնար : Իսկ ես սիրեցի անոր համար . որ ան է՛ր, ինչ որ է՛ր :

Եւանդ — (Խնդալով) Կը հասկընա՛մ. դէկատա՛նս և էմպրեսսիօնի՛սմ . գեղարեեստի վերջին խօսքը : Որ կ'ըսեմ՝ արտիստի հոգի՛ ունիք :

(Կը լսւի շոգենոււի խռպոտ սոյլը) :

Մարի — (Խայթածի պէս կը ցընցւի, կը սեղմէ ծնօտն ու բռնուցքները, առանց ետ նայելու) : Ա՛հ :

Եւանդ — (Նախ կարծես չի հասկընար, վերջը ծռելով դէպի պատշգամբը) : Ա՛խ, շոգենա՛ւը :

8 .

Մարգար — (Ներս շտապելով Խէն՝ դէպի պատշգամբ) : Նա՛ւը, նա՛ւը :

(Անոր ետեւէն կու գան մայրը, Նեկտար ու Հարենց . բոլորն ալ կ'անցնին պատշգամբ) :

Հարենց — (Անցնելու ատեն) Ի՜նչ ալ չիք նաւ է ընտրեր . փարանին ուրկէ է, չես հասկընար որ :

9 .

Եւանդ — Երթա՛նք, օրիորդ : Թաշկինակ մըն ալ դուք շարժեցէք ձեր այդ սանձակոծին : Ծի՛շտ է, քչիկ մը շատ էր յիմարաւուն, բայց, է՛, ի՜նչ ըրած, ատ ալ վերջապէս բոլոր վերերէն թռչող մարդոց թոյլ կողմն է . բան չկա : Երթա՛նք :

Մարի — (Լուրջ ու խեղդաւած) : Սպասեցէ՛ք դեռ :

Եւանդ — Նորէ՛ն հիանալի : Դուք այսօր ինձի ուղղակի կ'ապշեցնէք ձեր շարժումներուն ու ձեր խօսքերուն այդ աստիճանի պլաստիկութեամբը : Ա՛, հրաշալի էր մանաւանդ քիչ մը առաջ ձեր այն նշաւաւոր նամակը պատռելը, ձեր այն աստուածային անդորրութիւնը, Ատոր փոխարէն ի՜նչ պիտի ընէր, եթէ ուրիշ մը ձեր տեղը ըլլար . լաց, կի՛րք ու յուզում, (ծաղրով) կա՛մ, ո՞վ գիտէ, գնդակ մը ճակոխն, Ըսէ՛ք, ապուշութիւն չէ՞ :

Մարի — (Սառն ու յամառ՝ գամած է աչքերը տղոն) : Իհարկէ, իհարկէ :

Մարգար — (Պատշգամբ դռնէն) : Մօտեցա՛ն, մօտեցա՛ն, օրի՜որդ . (Կ'ըշտապէ նորէն ետ ու թաշկինակ կը շարժէ) : (Միւսներն ալ խմբաւած են ու յենաւած վանդակին) :

Եւանդ — Երթա՛նք, չանցնի՛ր : Վերջին բարեւ մը . (կատակով) վսեմ հրաժե՛շտ մը գոնէ :

Մարի — (Ամբողջ մարմնով կ'ուղղւի, սաստիկ լարւած ու լուրջ) : Այո՛, իսկո՛յն, ա՛յս վայրկեանիս : (Կը մտնէ եր սենեակը) :

10 .

Եւանդ — (Նախ կ'երթա դէպի պատշգամբ, ետ կու գայ նորէն ու մօտենալով աղջկան սենեակի դռանը) Դէ՛, օրի՜որդ :

69

(Ներքէն ատրճանակի սլայթիւն):

**Յուանդ** — (Սարսափահար կը բարձրացնէ ձեռքերը): Ահ...:

**Մայր** — (Ահառած ներս վազելով): Ի՞նչ բան էր ատիկա.  
ո՛ւր է Մարին:

(Ներանդ խելագարի պէս կը նետուի աղջկան սենեակը:

Մայրն ու միւսներն ալ անոր ետէն: ձիւ, շփոթ, սարսափ):

(Կը մնայ միայն Մարգարը պատշգամին դռներուն.  
մէջ ապշած ու շար, ահագին կարմիր թաշկինակը ձեռքին):

(Լուռ: Եւ դուրսը աւելի մօտիկէն կը լսուի շողերնաւին  
սոյլը, աւելի խռպոտ ու աւելի յաղթական):



---

---

Գրած է՝

1904 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ, ԹԻՖԼԻՍ

---


---

ՀՀ Ազգային գրադարան



NL0358641

ԳԻՆԸ  
4  
ՂՐՇ.



47397